

11385



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՅ  
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՊՐԱԿ II

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸՆԻՐ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՅՑՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ, 1927 .

3(02)

2-16

3(02)  
P-16

for 25 SEP 2006

21 DEC 2009

# ՔԱՂԱՔԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՔԱՂԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 13 ԴԱՅ  
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ըստ Վ. ՎԻԲԳԱՆՍԿՈՒ

1003  
14325

ՊՐԱԿ II



ԽԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1927

Զրույց առաջին

Напечатано в типографии Госиздата  
 „Красный Пролетарий“. Москва,  
 Плехановская ул., д. № 16,  
 в количестве 5000 экз.  
 Гл.лит № 64091.

## ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Ամեն մի յերկը համար ել արդյունաբերության զարգացումը մեծ նշանակություն ունի: Նայելով թե ինչ չափով ե զարգացած այս կամ այն յերկը արդյունաբերությունը, ըստ այսմ ել դատում են տվյալ յերկը մասին: Որինակի համար՝ Ամերիկան կամ Անգլիան առաջավոր յերկըների շարքումն են գտնվում հենց այն պատճառով, վոր նրանց արդյունաբերությունը ավելի մեծ տեղ ե բռնում և ավելի յե զարգացած, քան գյուղատնտեսությունը: Ի դեպք պետք ե ասել, վոր Ամերիկայի գործարանները աշխատում են կատարելագործված մեքենաներով և այստեղ տեխնիկան ավելի յե զարգացած, քան մյուս յերկըներում: Բացի գրանից, Ամերիկայի գործարաններում աշխատող բանվորների թիվն ել մեծ ե, իրենց գործին նրանք ավելի ծանոթ և ավելի վարժ են:

Բոլոր յերկըներում արդյունաբերությունը պատկանում ե կապիտալիստներին: Մեր յերկըներում ևս մոտիկ անցյալում՝ ցարի, ժամանակավոր կառավարության, դաշնակների որով գործարանները, հանքերը, յերկաթուղին,

նավերը պատկանում եյին կամ կապիտալիստներին, կամ պետությանը, վոր նույն կապիտալիստների կազմակերպությունն եր:

Ոռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, իսկ մեզ մոտ՝ Հայաստանում դաշնակներին քշելուց հետո, արդյունաբերությունը անցավ պետության ձեռքը և կոչվում ե պետական արդյունաբերություն:

Պետությունը կառավարում ե թե յերկրի վողջ արդյունաբերությունը և թե առանձին-առանձին գործարանները, հանքերը և այլն: Մեր յերկրի արդյունաբերությունը կառավարելու համար հիմնված ե ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդ: Յերկրի մեջ գտնվող բոլոր գործարաններն ու ընդհանրապես արդյունաբերության բոլոր ճյուղերը կարող են աշխատել համերաշխ, իրար հետ համաձայնեցրած, մի ընդհանուր ծրագրով, յեթե պետությունը, վորին պատկանում են յերկրի բոլոր գործարանները, այդ բոլորը կառավարե մեկ վարչության դեկալարությամբ:

Արդյունաբերության զարգացումը շատ մեծ նշանակություն ունի յերկրի ծաղկման համար, մանավանդ գյուղական տնտեսության համար: Մի բոլե մեզ պատկերացնենք, թե ինչ կլիներ, յեթե արդյունաբերությունը չզարգանար: Գյուղացին ստիպված կլիներ հողը փայտով, ձողով փորփորել: Զեր լինի նույնիսկ կացին, գերանդի, մեխ: Զեր լինի գործարանային կտորեղեն: Իսկ զյուղատնտեսական գործիքների ու մեքենաների մասին խոսք անդամ լինել չեր կարող:

Այդ ամենը զյուղացուն կարող ե տալ միայն արդյունաբերությունը: Գյուղն առանց քաղաքի ոգնության, ինչպես և քաղաքն առանց գյուղի աջակցության չեն կարող ապրել:

Յեթե զյուղն առանց քաղաքի և քաղաքն առանց գյուղի չեն կարող ապրել, կնշանակե արդյունաբերու-

թյունն ել չի կարող զարգանալ՝ յեթե գյուղական տնտեսության վիճակը որեց-որ վատանա: Զի կարող, իր հերթին, գյուղական տնտեսությունը զարգանալ, յեթե արդյունաբերությունը կանգ ե առած: Զկարծեք թե գյուղական տնտեսությունը ունի արդյունաբերությունից միայն նրա համար, վոր արդյունաբերությունը գյուղացուն տալիս ե մեքենա, ապրանք: Դյուղական տնտեսությունը կարող է զարգանալ, առաջ գնալ, յեթե նրա մթերքները ծախվում են: Ո՞վ ե գնում զյուղացու աշխատանքի արդյունքը—հաց, միս բանջարեղեն, յուղ, պանիր, բրինձ և այլն: Իհարկե նա, ով ինքը չի մշակում հողը, չի պարապում անամնապահությամբ: Զե՞ վոր յերկրագործը ինքը ցորեն չի գնում, իսկ կով ունեցողը՝ կաթ կամ յուղ: Այդ ամենը գնում են քաղաքում ապրողները, գլխավորապես բանվորները:

Ո՞վ ե գնում զյուղացուց այն բոլոր արդյունաբերական-տեխնիկական մթերքները, վոր գյուղացիությունն ե տալիս—բուրդ, բամբակ, կտավատ, շաքար, ճակնդեղ և այլն: Ումն են հարկավոր այդ մթերքները: Հայտնի բան ե, վոր այդ ամենը հարկավոր են գործարաններին: Նրանք գնում են զյուղացուց այդ ամենը և գործարաններում դարձնում ապրանք: Այստեղից պարզ ե, վոր արդյունաբերության զարգացման հետ կապ ունի զյուղական տնտեսության զարգացումը, վորովհետեւ արդյունաբերությունը կարող ե զյուղացուց մեծ չափերով գնել գործարանների համար հում նյութեր:

Պետք ե ասել նաև, վոր արդյունաբերությունը շահագրգոված ե զյուղական տնտեսության զարգացմամբ վոչ միայն նրա համար, վոր զյուղը քաղաքի բանվորներին հաց ե տալիս, իսկ գործարաններին՝ հում նյութ: Արդյունաբերության, ինչպես և զյուղական տնտեսության համար անհրաժեշտ ե, վոր ապրանքները ծախվեն: Յեթե զյուղին շատ ապրանք ե գնում գործարաններից, կնշանակե՝ ար-

դյունաբերության գործերը լավ են: Իսկ ո՞վ ե գլխավուցրապես գնում քաղաքի ապրանքները: Ինարկե գյուղացին: Այստեղից պարզ ե, վոր գյուղացին կարող ե շատ ապրանք գնել միայն այն դեպքում, յեթե նա բավականաչափ ունի հացահատիկ, բամբակ և այլն, վորի ավելորդ մասը կարող ե ծախել: Յեթե գյուղական տնտեսությունն ուժեղանում և արդյունավետ ե գառնում, կնշանակե գյուղացին կարող ե գնել գյուղատեսական մեքենաներ, յերկաթեղեն և ուրիշ ապրանք, վոր քաղաքն ե պատրաստում:

Այսպիսով գյուղական տնտեսության համար անհրաժեշտ ե, վոր արդյունաբերությունը զարգանա, իսկ արդյունաբերության համար անհրաժեշտ ե, վոր զարգանա գյուղական տնտեսությունը:

Արդյունաբերության և գյուղական տնտեսության այս փոխադարձ կախումն հիմք ե ստեղծում քաղաքի ե գյուղի զողման համար, բանվորի և գյուղացու տնտեսական դաշնաքի համար:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչո՞ւ մեր արդյունաբերությունը կոչվում ե պետական արդյունաբերություն:

Գյուղական տնտեսության համար ի՞նչ նշանակություն ունի արդյունաբերությունը:

Ի՞նչ նշանակություն ունի արդյունաբերության համար գյուղական տնտեսությունը:

ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

Համաշխարհային պատերազմից առաջ Ռուսաստանի գործարաններում պատրաստվում եին ապրանքներ, վորոնց պահանջը մեծ եր (մեխ, սալոն, նավթ, չիթ, ամանեղեն և այլն). այդպիսի ապրանք արտադրվում եր

յերկու միլիոնդ հարյուր միլիոն ռուբլու: Այդ ապրանքների յերկու յերրորդական մասը գյուղ եր գնում:

Բացի դրանից, գյուղը քաղաքից գնում եր գյուղատընտեսական մեքենաներ, հանքային պարարտացման միջոցներ մոտ 40 միլիոն ռուբլու, և գործարանային ուրիշ ապրանքներ՝ 300 միլիոն ռուբլու: Արդյունաբերության այն մասը, վոր Ռուսաստանում համաշխարհային պատերազմից առաջ գյուղ եր գնում, կազմում եր 1 միլիոնդ 780 միլիոն ռուբլու: Այստեղ եյականը այն ե, թե ինչ ապրանք եր արդյունաբերությունը տալիս գյուղին, և այն, վոր այդ ապրանքը - գնողը գյուղացին եր: Այժմ ել մեր Խորհրդային յերկրում արդյունաբերության գլխավոր գնողը գյուղացին ե: Այդ այն պատճառով ե, վոր Խորհրդային Միության ազգաբնակչության մեծ մասը կազմում ե գյուղացիությունը: Հին Ռուսաստանի արդյունաբերությունը շատ եր հետ մնացել ոտար յերկրների արդյունաբերությունից: 1914 թվին թագավորի սկսած պատերազմը ավելի և քայլքայեց արդյունաբերությունը: Իսկ քաղաքացիական կռվի որերին մեր յերկրի արդյունաբերությունը համարյա կանգ առավ:

Այդ տարիներին մեր յերկրի գործարաններից շատերը բոլորովին կանգ առան: Ածուխ և նավթ համարյա չեյին ստացվում, հանքերի աշխատանքը դադարեց, իսկ բանվորների մեծ մասը հաց ճարելու համար ստիպված եր գնալ գյուղ և այնտեղ մի կերպ ապրել: Պարզ ե, վոր արդյունաբերությունը այդ գրության մեջ չեր կարող գյուղացուն տալ անհրաժեշտ քանակությամբ ապրանք:

Այսպիս, որինակի համար՝ 1913 թվին Ռուսաստանի արդյունաբերությունը 5 միլիոնդ 620 միլիոնի ապրանք եր բաց թողել, իսկ 1920 թվին, յեթե հին գներով հաշվենք, միայն 1 միլիոնդի ապրանք: Ռւրիշ խոսքով

100 միլիոն փութ կամ արշին ապրանքի փոխարեն միայն  
17 միլիոն:

Այստեղ բերում ենք մի փոքրիկ պատկեր, վորը ցույց է  
տալիս, թե ինչպես մեր արդյունաբերությունը 1920 թվին  
ընկել էր:

1913 թվին արդյունաբերությունը սվել է՝

|                              |                  |
|------------------------------|------------------|
| Ածուխ <sup>1</sup>           | 1.745 միլ. փութ, |
| Ցերկաթ և պողպատ <sup>2</sup> | 259 միլիոն փութ, |
| Խոփ <sup>3</sup>             | 667 հազար հատ,   |
| Մանուֆակտուրա <sup>4</sup>   | 3,185 միլ. արշ.  |

1920 թվին արդյունաբերությունը սվել է՝

|                              |                  |
|------------------------------|------------------|
| Ածուխ <sup>1</sup>           | 445 միլիոն փութ, |
| Ցերկաթ և պողպատ <sup>2</sup> | 10 միլիոն փութ,  |
| Խոփ <sup>3</sup>             | 89 հազար հատ,    |
| Մանուֆակտուրա <sup>4</sup>   | 210 միլիոն արշ.  |

Այժմ տեսնենք, թե ինչ գրության մեջ ե մեր ար-  
դյունաբերությունը:

Մեր յերկրի արդյունաբերությունը սկսում է զար-  
գանալ 1921 թվից: Այժմ մենք արդեն հասել ենք նախա-  
պատերազմյան շրջանի աստիճանին՝ մեր արդյունաբե-  
րության տված ապրանքների քանակի խնդրում:

1925—26 թվին մեր արդյունաբերությունը հասավ  
նախապատերազմյան շրջանի արդյունաբերության 95%:  
Մեր թշնամիները շատ եյին խոսում և նույնիսկ ծիծառում  
եյին մեզ վրա, ասելով, թե մենք չենք կարող վերականգնել  
յերկրի քայլայված տնտեսությունը: Այժմ նրանք ել ստիպ-  
ված են խոստվանել, վոր մենք արդեն հասել ենք նա-  
խապատերազմյան շրջանի աստիճանին: Այս տարի մենք վոչ  
միայն կհասնենք 1913 թ. թվերին, այլև, արդյունաբերու-  
թյան մի քանի ճյուղերում, մենք նույնիսկ առաջ կանց-  
նենք: Որինակի համար՝ ելեքտրական արդյունաբերու-

թյան նկատմամբ դեռ անցյալ տարի նախապատերազմ-  
յան թվից անցել եյինք, իսկ այս տարի մեկ ու կես ան-  
դամ մեր ուժեղը ավելի կլինեն:

Ավելի դանդաղ ե զարգանում մեր մետաղագործու-  
թյունը, վոր պատերազմի ընթացքում շատ եր քայլայվել  
և պահանջում ե, վորպեսզի նոր մեքենաներ ձեռք բերենք:

1926 թվի վերջին մեր յերկրի արդյունաբերությունը  
իր բոլոր յետ մնացած ճյուղերում կհասնի հին չափերին:  
Բայց այդ քիչ ե: Ցեթե մենք ասում ենք, վոր մեր ար-  
դյունաբերությունը համում ե նախապատերազմյան չա-  
փերին, այդ դեռ չի նշանակում, վոր մենք դրանով բավա-  
կանանալու յենք: Վո՞չ: Այդ ասում ենք նրա համար, վոր-  
պեսզի հեշտ լինի համեմատել — արդյո՞ք մենք զարգանում  
և առաջ ենք գնում, թե՞ վոչ: Իսկ մեր յերկիրը, վոր դիմում  
ե դեպի սոցիալիզմ, չի կարող բավականանալ միայն նա-  
խապատերազմյան շրջանի արդյունաբերության նորմայով,  
մանավանդ վոր Ռուսաստանի արդյունաբերությունն այն  
ժամանակ յետ եր մնում:

Համամիության Կոմունիստական Կուսակցության  
XIV Համագումարն այդ առթիվ հանեց վորոշ բանաձեռ: Նա  
ասաց, վոր Կուսակցության և Խորհրդային իշխանության  
գլխավոր խնդիրը կայանում ե նրանում, վորպեսզի մեր  
յերկրում կառուցենք սոցիալիզմ: Իսկ այդ նշանակում ե,  
վոր մենք պիտի շատ լուրջ ուշադրություն դարձնենք մեր  
արդյունաբերության վրա, — հարկավոր ե ուժեղացնել, ամ-  
րացնել արդյունաբերությունը, նոր գործիքներով, մե-  
քենաներով հարստացնել մեր գործարանները, լայնացնել  
և շինել նոր գործարաններ: Այդ ամենը հարկավոր ե այն-  
պես անել, վորպեսզի մեր յերկիրը կախում չունենա  
ոտար կապիտալիստական յերկրներից: Զե՞ վոր մինչեւ այժմ  
հին Ռուսաստանում մեքենաներ պատրաստող գործարան-  
ների թիվը շատ քիչ եր, Ռուսաստանի արդյունաբերու-

թյունը կախումն ուներ ոտար յերկրներից, վորովհետեւ արդյունաբերության և գյուղական տնտեսության համար ամենաանհրաժեշտ մեքենաները ստացվում եյին արտասահմանից: Կոմունիստական կուսակցության XIV Համագումարը հրահանգեց կառուցել այնպիսի գործարաններ, վորտեղ շինվեն մեքենաներ, տրակտոր, վորպեսզի ոտար լծից մեր արդյունաբերությունն ազատվի:

ՀԱ.ՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ զրության մեջ եր արդյունաբերությունը Ռուսաստանում մեծ պատերազմից առաջ:

Ի՞նչ ազգեցություն ունեցավ պատերազմը արդյունաբերության վրա:

Ի՞նչու Խորհրդային իշխանությունը չի կարող բավականանալ միայն հին արդյունաբերությունը վերականգնելով:

ԻՆՉՈՒ ՄԵՐ Ա.ՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՈՒՄ ԵՆՔ  
ՎՈ՞Չ ՄԻԱՅՆ ՊԵՏԱԿԱՆ, ԱՅԼ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ.

Աշխատում են մեր գործարանները, աղմկում այնպես, ինչպես առաջ: Բայց բոլորովին այլ վերաբերմունք ունեն այստեղ աշխատող բանվորները և այլ կերպ ե ծախսվում արդյունաբերությունից ստացված արդյունքը—ոգութը: Այժմ տեսնենք, թե ինչով ե տարբերվում Խորհրդային յերկրի գործարանը կապիտալիստականից:

Ամենից առաջ, կապիտալիստական արդյունաբերությունն ունի գործարանատեր և բանվոր: Գործարանատերոջն ե պատկանում գործարանն ու նրա միջի հարստությունը՝ հում նյութը, վառելիքը, մեքենաները: Այնտեղ բանվորին պատկանում ե միայն նրա բանվորական ուժը՝ ձեռքերը: Գործարանատերը գնում ե նրա բանվորական ուժը և աշխատեցնում նրան: Այն ամենը, ինչ գործարանում շինվում ե բանվորի ձեռքով՝ պատկանում է գործարանատերին: Գործարանատերը աշխատեցնում է բանվորի ձեռքով՝ պատկանում է գործարանատերին:

Եին, գործարանը պահում ե միայն նրա համար, վորպեսզի ոգուտ ստանա: Կապիտալիստն ոգուտ ե ստանում, վորովհետեւ շահագործում ե բանվորին, վորովհետեւ աշխատանքի մեծ մասն իրեն ե վերցնում: Այդ—այսպես ե տեղի ունենում: Ասենք թե մի բանվորը որվա ընթացքում կարող ե 2 ուռելու ավրանք պատրաստել գործարանում: Կապիտալիստը բանվորին վարձելով, մի ուռելի աշխատավարձ ե վճարում: Բանվորն իր աշխատանքի վճարի միայն կեսն ե ստանում, իսկ մյուս կեսը՝ մի ուռելին մնում ե կապիտալիստին, վորպես ոգուտ: Այդ ոգուտի մի մասը կապիտալիստը ծախսում ե իր անձնական պետքերին, այսինքն՝ ապրում ե ուրիշի աշխատանքով, իսկ ոգուտի մյուս մասը գործ ե դնում արդյունաբերությունը լայնացնելու համար:

Բոլորովին այլ հիմքերի վրա յե դրված մեր պետական արդյունաբերությունը, վոր բանվորա-զյուղացիական կառավարության սեփականությունն ե: Պետական արդյունաբերության մեջ չկա գործարանատեր և սրա բանվոր: Պետական արդյունաբերության տերը աշխատավորությունն ե, վորի մասն ե կազմում և բանվորությունը:

Իսկ ո՞վ ե բանվորին ընդունում գործարան ու նրան աշխատավարձ վճարում: Այդ ամենն անողը պետությունն ե, վոր ունի իր ներկայացուցիչները գործարաններում՝ գործարանի պետը (գիրեկտոր): Աշխատավարձը նշանակում ե պետությունը արհեստական միությունների հետ միասին: Այդ կարգը հաստատվել ե այն նպատակով, վորպեսզի աշխատավարձը համապատասխանի արդյունաբերության: Յեթե այդպես չանենք, գիտե՞ք ինչ կարող ե ստացվել: Որինակի համար՝ վերցնենք և բանվորներին նշանակենք շատ բարձր աշխատավարձ: Զե՞ վոր մի տարուց հետո այդ գործարանից վոչինչ չի մնա: Բանվորներին բարձր աշխատավարձ վճարելու համար պետք կլինի ծախ ել ամեն ինչ, նույնիսկ մեքենաները: Պե-

տությունը բանվորների համար նշանակում ե այնպիսի աշխատավարձ, վոր արդյունաբերությունը կարողանա ուժեղանալ, լայնանալ և զարգանալ:

Կապիտալիստական արդյունաբերությունն ընդարձակվում ե ջնորհիվ այն ոգուտի, վոր կապիտալիստն ե ստանում: Իսկ ի՞նչ միջոցներով ե մեր արդյունաբերությունը լայնանում: Նույնպես ջնորհիվ նույն ոգուտի, վոր կուտակվում ե արդյունաբերության մեջ: Կապիտալիստի ոգուտը յերկու գլխավոր մասի յե բաժանվում: Մի մասը գնում ե կապիտալիստի ծախքերը ծածկելու, իսկ մյուս մասը՝ արդյունաբերությունը լայնացնելու: Կապիտալիստն իր գործարանը լայնացնում ե, վորպեսզի նոր ոգուտներ ստանա և ելի հարստանա: Պետական արդյունաբերության ոգուտն այլ կերպ ե ծախսվում: Նա չորս մասի յե բաժանվում: Պետությունը այդ ոգուտի մի մասը վերցնում ե հոգուտ պետական գանձարանի և հատկացնում ե ժողովրդական լուսավորությանը, հիվանդանոցներ պահեռն, կարմիր բանակի պետքերին, գյուղացիության համար գյուղատնտեսական կայաններ կազմակերպելուն և այլն:

1925—26 թվին մեր արդյունաբերությունը պետությանը տվեց 162 միլիոն ռուբլի ոգուտ: Ինչպես տեսնում եք, արդյունաբերության ոգուտի մի մասը գնում ե գյուղի պետքերը ծածկելու համար: Ոգուտի մյուս մասը գնում ե արդյունաբերության լայնացմանը: Գնվում են նոր մեքենաներ, շինվում են նորանոր գործարաններ և այլն: Յերրորդ մասը գնում ե այսպես կոչված՝ պահեստի ֆոնդի համար: Սրա նպատակն ե գումարներ պահել նոր շինարարական աշխատանքների և զանազան անակընկալ դեպքերի համար (յերաշտ և այլն): Յեզ վերջապես, չորրորդ մասը գնում ե բանվորների կյանքը բարելավելու գործին: Շինվում են նոր բնակարաններ, յերեխանների հա-

տար մանկապարտեզներ, մանկամսուրներ, բանվորական մկումբներ և այլն:

Այսպիսով, պետական արդյունաբերության ոգուտն ընկնում ե վոչ թե մասնավոր մարդկանց գրպանը, այլ յերկրի աշխատավորության կյանքը բարելավելու գործին և հատկացվում:

Կապիտալիստական յերկրների արդյունաբերության զարգացումը կնշանակե — բանվորության շահագործման զարգացում: Յեթե կապիտալիստական յերկրում շատանում ե գործարանների թիվը, շինվում են նոր գործարաններ, կնշանակե մեծանում ե նաև բանվորների թիվը, վորոնք ընկնում են կապիտալիստների ճանկը ու շահագործվում: Այդ՝ միևնույն ժամանակ կնշանակե — կապիտալիստների ուժեղացումն: Պետական արդյունաբերության ուժեղացումը Խորհրդային յերկրում, յուրաքանչյուր նոր գործարանի կառուցումը — կնշանակե մեր յերկրի աղքատության և քայլքայման նվազում, կնշանակե — մենք մի քանի քայլ մոտենու մենք սոցիալիզմին: Յենթադրենք թե կառուցված են ևս մի քանի նոր գործարաններ, դրանք ամեն տարի նորանոր ոգուտներ կտան պետությանը: Յեզ պետությունը բաց կանի նորանոր դպրոցներ, հիվանդանոցներ, կշինվեն նոր տներ, կբարվոքվի գյուղատնտեսության վիճակն և այլն. կավելանա բանվորների թիվը, վորոնք կաշխատեն առանց կապիտալիստների և յերկիրը ավելի կմոտենա սոցիալիզմին:

Այսպիսով, մեր յերկրի գործարանները բանվորներին չեն շահագործում: Նրանց աշխատանքի արդյունքը հատկացվում է աշխատավորության կյանքի լավացմանը: Այդ կնշանակե վոր մեր արդյունաբերությունը վոչ միայն պետական ե, այլ և սոցիալիստական:

Առաջին գլխում առված ե, վոր սոցիալիզմ է կոչվում այն տեսակ իրավակարգը, վորտեղ հողը, գործարանը

պատկանում են վոչ թե առանձին անհատներին, վորոնք կարող են իրենք հարստանալ, իսկ ուղիղներին շահագործել, այլ պատկանում են բոլոր աշխատավորությանը միասին։ Այդ ժամանակ հողն ու գործարաններն աշխատավորությանը պիտի տան այնքան ապրանք, վորքան նրանց հարկավոր եւ Առաջինին մենք արդեն հասել ենք, հողն ու գործարանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ պատկանում են աշխատավորությանը, իսկ յերկրորդին մենք ձգտում ենք որեց-որ, տարեցտարի, Սոցիալիստական արդյունաբերության զարգացումը հիմք ե հանդիսանում յերկրի հետագա զարգացման։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչով ե կապիտալիստական գործարանը տարբերվում սոցիալիստականից, ինչի՞ վրա յե ծախսվում արդյունաբերության ոգումը՝ ինչո՞ւ մեր արդյունաբերությունը կարելի յե սոցիալիստական անվանել։

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

Մինչև պատերազմը Հայաստանի թե հանքերը և թե մեծ գործարանները գտնվում եյին արտասահմանյան կապիտալիստների, գլխավորապես Փրանսիացիների ձեռքում։ Յեկ մենք չգիտեյինք, թե նրանք տարեկան ինչքա՞ն եյին թալանում մեր հանքերը։ Իսկ հիմա մեր յերկրի թե հանքերը և թե գործարանները պետականացրած են և նրանց ոգուտը գնում ե մեր յերկրի շինարարության համար։

1924—25 տնտեսական տարվա ընթացքում միայն Ղափանի հանքերից պղինձ ե արտադրած 88,640 ֆութ, իսկ 25—26 տնտեսական տարում՝ 345,800 ֆութ։

Նույն Ղափանի գործարաններում 1924—25 տնտեսական տարում պղինձ ե արտադրած 30,860 ֆութ, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 39,530 ֆութ։

Ալանվերդու հանքերից 25—26 տնտեսական տարվա ընթացքում 235,000 ֆութ պղինձ ե արտադրած։

Կարբիտ, վոր գործ են ածում լուսավորության համար, 1924—25 տնտեսական տարում՝ 8,150 ֆութ, իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 16 հազար 990 ֆութ։

Պղինձ 1924—25 տնտեսական տարում՝ 10,526 ֆ., իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 9,397 ֆութ։

Ծծմբային Կոչեղան ե պատրաստված 1925—26 տընտեսական տարում՝ 24,000 ֆութ։

Կաշեգործարանը 1922—23 տնտեսական տարում պատրաստել ե 6,753 մեծ և 27,883 մանր կտոր կաշիներ։ Իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 10,611 մեծ և 96,150 մանր կտոր կաշիներ։

«Արարատ» գործարանը 1923—24 տնտեսական տարում արտադրել ե 802,800 ռ. ապրանք։ Իսկ 1925—26 տնտեսական տարում՝ 1,972,000 ռուբլու։

Հայաստանի Ժողոնախորհը, վորը ընդգրկում ե մեր յերկրի համարյա բոլոր մեծ գործարաններն ու հանքերը, 1924 թվին ուներ 810 բանվոր և 130 ծառայող։ 1926 թվին՝ 3,782 բանվոր և 332 ծառայող։ Իսկ 1927 թվին նախատեսնված ե ունենալ 5,333 բանվոր։

Ինյան ապրանքի ե արտադրում Փողմանուրիլ. 1923—1924 տնտեսական տարում՝ 1,712,600 ռուբլ., իսկ 1925—1926 տնտեսական տարում՝ 5,385,000 ռուբլու, և ըստ ծրագրի՝ 1927 թվին արտադրելու յե 12,870,800 ռուբլու ապրանք։

Հենաբուժության զարգացումը Հայաստանում. Մինչև Խորհրդայնացումը թե ինչքա՞ն ձուկ եր տարեկան վորսվում Սևանա լճից, այդ մասին վոչ մի տեղեկություն չկա, վորովհետև անընդհատ կապալով ե տրվել մասնավոր մարդկանց, վորոնք աշխատել են վորքան հնարավոր ե շատ թալանել։

1923—24 տնտեսական տարվա ընթացքում Հայաստանում միանում ե մի մասնավոր կապալառվի հետ և նույն տարին

միասին ամբողջ լճից վորսում են 11.000 փութ իշխան  
ու կողակ ձուկ:

1924 թվի գարնանը ժողովական վորոշում ե, վոր  
Սևանա լճի ձուկը պիտի պետական հիմնարկությունը ոգ-  
տագործի և հարմար ե գտնում իրավունքը միմիայն Հայ-  
առին տալ:

Հայառը, համաձայն այդ վորոշման, 1924 թ. սեպ-  
տեմբերի 1-ին հիմնում ե ձկնաբուծական բաժին և առաջին  
ձկնաբուծական կայանը հիմնում ե Նորագուղում:

Նույն թվին, 1924—25 տնտեսական տարում, ձուկ-  
բաժինը վորսում ե 20.000 փութ, հետեւյալ 1925—26  
տնտեսական տարում 28 հազար փութ, իսկ հիմա՝ 1926—  
27 տնտեսական տարվա ընթացքում նախատեսնված ե  
վորսալ 42 հազար փութ, այսինքն, մոտ 4 անգամ ավել,  
վորսալ 1923—24 տնտեսական տարվա ընթացքում: Համա-  
քան մասնագետների ասածներին, այս թիվը բարձրա-  
ձայն միանագետների ասածներին, այս թիվը բարձրա-  
ձայն յե մինչև 100.000 փթի մի տարվա ընթացքում:

Սկզբում Հայառի ձկնաբուծական բաժնում աշխա-  
տում եյին 43 բանվոր, իսկ հիմա աշխատում են 515  
բանվոր, վորոնք գործ են ածելու 25 ուռկան:

Սևանա լճի մեջ կա նաև այնպիսի կեր, վորը իշխանն  
ու կողակը չեն ուտում, իսկ այդ կերով կարելի յե լճում  
բազմացնել սիգա կոչված ձուկը, վորից մինչև սեպտեմբեր  
լճից արդեն վորսվել ե մոտ 8.000 փ.:

Միգայի բազմացումը շարունակվում ե:

Պեմզայի արտադրությունը Հայաստանում. Առաջ ամ-  
բողջ Ռուսաստանում տարեկան 120.000 փութ պեմզա  
եյին գործածում:

Պեմզայից գործարաններում պատրաստում են զա-  
նազան փոշիներ և գլխավորապես մետաղ մաքրելու համար  
են այդ գործադրում: Ռուսաստանի բանեցրած պեմզայի  
100.000 փութը մատակարարում եյին Բելգիայի, Գեր-

մանիայի, և գլխավորապես Խոալիայի առևտրականները,  
քանի վոր հենց իրենց ձեռքերում եյին գտնվում պեմ-  
զայի հանքերը, և միայն մնացած մասը գնում եյին Ղարաբաց:

Իսկ հիմա ամբողջ Խորհրդային հանրապետություն-  
ների գործարաններում գործածվող պեմզան Հայաստանից  
ե գնում, Անի կայարանի մոտ գտնվող հանքերից, վորտեղ  
հազարից ավելի բանվորներ են աշխատում:

Պեմզան բավականին թանգ գին ունեցող հանք ե,  
փութը մոտ 8 ուռկանի արժեք:

Պեմզայի հանքերը գտնված են Խորհրդային իշխա-  
նության որով: Առաջ այդ հանքերը գտնելու մասին չեյին  
մտածում, քանի վոր այդ բանն արտասահմանյան կապի-  
տալիստների շահերին ձեռնտու չեք:

#### ԵԼԵՔԾՐՈՒՑԻՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Հայաստանի անտառները շատ քիչ են, քարածուխի  
հանքեր ել համարյա թե չկան:

Դրա համար ել մի ուրիշ յելք ու միջոց պիտի վիճակ-  
ունք վառելիքի և լուսավորության կարիքները բավարա-  
րելու համար: Յեկ այդ միջոցը ելեքտրոֆիկացիան ե,  
վորը ստացվում ե մեր յերկրի ջրերի ուժից: Հայաստանի  
ջրերն ամենապակասը կարող են տալ 500 հազարից մինչև  
600 հազար ձիու ուժ կամ ենենգիա:

Մինչև խորհրդայնացումը Հայաստանում, թե ջրով և  
թե նավթով բանող ելեքտրական կայարանների ուժը միա-  
սին վերցրած հավասար եր 3.805 ձիու ուժի, վորից  
միայն ջրով բանողը 2.530 եր: Ինչպես տեսնում ենք, մինչև  
խորհրդայնացումը մեր յերկրի ունեցած եներգիայի միայն  
կես տոկոսն ե ոգտագործվել:

Հայաստանում գոյություն ունեցող ելեքտրական կա-  
յարանները Խորհրդային իշխանության ձեռքն անցան բո-  
լորովին քայլքայլած գրության մեջ: Խորհրդային իշխա-



նությունը հատուկ յեռանդով կարողացավ այս վեց տարվա  
ընթացքում վերականգնել ու կարգի բերել վո՞չ միայն  
յեղածներն, այլ և կառուցեց նոր հսկայական կայաններ:

22 թվից սկսած Հայաստանում կառուցվել են հե-  
տեյալ ելեքտրական կայանները—

|                |           |            |
|----------------|-----------|------------|
| 1) Ստեփանովան  | 300       | ձիու ուժի. |
| 2) Մեղրի       | 150—400   | » »        |
| 3) Նոր-Բայազետ | 210       | » »        |
| 4) Ղաչաղան     | 50        | » »        |
| 5) Ղարաբիլսա   | 125—400   | » »        |
| 6) Ցերեան      | 2600—5200 | » »        |
| 7) Լենինական   | 3000—7000 | » »        |
| 8) Իջևան       | 500—2000  | » »        |
| 9) Զբախոր      | 900—2000  | » »        |

Ընդամենը 17,560 ձիու ուժ:

Ուրեմն, 6 անգամ այդ ուժն ավելացել է Խորհրդային իշխանության որով:

Ելեքտրոֆիկացիան, բացի լույս տալուց, մեր յեր-  
կըրի համար մեծ նշանակություն ունի: Ելեքտրոֆիկա-  
ցիայի շնորհիվ մենք կարող ենք գործի գցել նոր գործա-  
րաններ, այդ գործարաններում պատրաստել զանազան  
պարարտանյութեր:

Ելեքտրական ուժով կարող ենք բանեցնել նոր ձեռի-  
տրակալորներ (առանց նավթի), սերպաներ, սերմազտիչ,  
կալսող և այլ գյուղատնտեսական մեքենաներ:

Ելեքտրոֆիկացիան հնարավորություն կտա մեզ մոտ  
մեծ չափերով զարգացնել մեր գյուղատնտեսությունն ու  
արդյունաբերությունը: Ահա ինչու ելեքտրոֆիկացիայի  
զարգացման վրա մեր կառավարությունն ու կոմունիտ-  
տական կուսակցությունը մեծ ուշադրություն են դար-  
ձընում:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴԱՑԱԾ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Պարզեցեք, թե ի՞նչ արդյունաբերական ապրանքներ  
ե գործածում ձեր գյուղը: Հաշվեցե՛ք, թե վերջին տարիների  
ընթացքում գյուղը շա՞տ թե՞ ավելի քիչ ապրանք ե ստանում:

Յեթե ձեզ մոտ գործարան կա, կազմակերպեցեք  
եքսկուրսիա: Ուշադրությամբ հետևեցե՛ք, թե ինչո՞վ ե տար-  
բերվում բանվորի աշխատանքը գյուղացու աշխատանքից:

Ձեր գյուղի հետ, կամ ձեր գյուղի այս կամ այն հիմ-  
նարկի շեֆի հետ (յեթե այդպիսին կա) կազ հաստատեցեք,  
Խնդրեցեք, վորպեսզի ձեզ դասախոսություն կարդան ար-  
դյունաբերության մասին կամ այն մասին, թե ինչպես են  
ապրում և աշխատում քաղաքում:

**ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.**

**ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.**

Առաջին զրույցից հայտնի յե, վոր մեր յերկրի արևատեսությունը բաղկացած է բաղմաթիվ վո՞չ - միատեսակ մասերից։ Մենք ունենք խոշոր գործարանային արդյունաբերություն, ինչպես, որինակ՝ մեքենագործական, մետաղագործական գործարաններ, մեծ հանքավայրեր և հանքարաններ, յերկաթուղի և այլն։ Կա նաև գործարանային միջակ արդյունաբերություն։ Կա արհեստավորների և տնայնագործների արդյունաբերություն։ Բացի այդ բոլորից կանակ գյուղատնտեսական տնտեսություն, վոր բաղկացած է միլիոնավոր մասն և ամենամասն տնտեսություններից։

Ինչքան ել տարբեր մասերից բաղկացած լինեն մեր յերկրի տնտեսության մասերը, այնուամենայիվ նրանք միմյանց վրա աղդում են, իրարից կախումն ունեն։ Անցյալ զրույցում մենք ասացինք, վոր արդյունաբերությունը կախում ունի գյուղատնտեսությունից և ընդհակառակը։ Մի անգամ ևս կրկնենք. պետք է ասել, վոր միայն արդյունաբերությունն է հնարավորություն տալիս տնտե-

սության զարգացման։ Նախ և առաջ, հիշենք, վոր միայն այն տնտեսությունները կարող են լավ զարգանալ, վորոնք ունեն մեքենաներ, վորոնք մեծանում են տեխնիկայի նորությունները ոգտագործելով։ Իսկ մենք գիտենք, վոր մասն տնտեսությունները այդ անել չեն կարող։ Վերցնենք, որինակի համար, հենց արդյունաբերության յերկու զանազան ճյուղեր՝ խոշոր և միջակ արդյունաբերությունները։ Այն, ինչ անում է խոշոր արդյունաբերական գործարանը, չի կարող անել միջակը։

Խոշոր արդյունաբերությունն ունի այն առանձնահատկությունը, վոր այնտեղ կան լավ մեքենաներ, տեխնիկական միջոցներ, գործ են ածվում լավ գործիքներ, այնինչ մասն գործարաններում և արհեստանոցներում, տեխնիկայի բացակայության պատճառով, աշխատանքը կատարվում է ձեռքով։ Վոր մեքենայի աշխատանքը ավելի ձեռնառու յե քան ձեռքի աշխատանքը—ցույց է տալիս հետեւյալ պատկերը.

**Մի զույգ կոշիկ կարելու համար հարկավոր ե՝**

|                       |                     |
|-----------------------|---------------------|
| Ինչքան ժամանակ ե պետք | մեքենայով աշխատելիս |
| ձեռքով                | մեքենայով           |
| մեքենայով             | խնայողություն և     |
| աշխատելիս             | աշխատելիս           |
| Մելս խփելու 40 րոպե   | 15 րոպե             |
| Ռանդելու 80 »         | 3 »                 |
| Կալցինելու 80 »       | 3 »                 |

լինում  
64 %  
96 %  
96 %

Ձեռնարկությունը վորքան խոշոր է, նույնքան նրա տեխնիկական հարմարությունները կատարելագործված են, վոր կնշանակե նա ավելի արդյունավետ է, արագ և հաջող և աշխատում և ավելի եժան ապրանք է արտադրում։

Տնտեսելու տեսակետից, ի հարկե, խոշոր ձեռնարկությունն ավելի ձեռնառու յե, քան փոքրը։ Թե՛ շենքի, թե՛ մեքենաների, թե՛ վառելիքի և թե՛ հում նյութի խնայողություն կլինի։ Ի՞նչ եք կարծում, վո՞րն է հեշտ և եժան։ Կառուցել մի

մեծ, կատարելագործված գործարան, թե՞ հաղար հատ մանր գործարաններ, վորոնք կարողանան տալ այնքան ապրանք, վորքան այդ մեծ գործարանը։ Ի հարկե—առաջինը։

Խոշոր արտադրությունը ձեռնտու յե նաև գյուղատնտեսության մեջ։ Կարելի յե նույն որինակը բերել և այստեղ։ Որինակի համար, ունենք գյուղական մի մեծ տրնտեսություն։ Այդ անտեսության մեջ աշխատում են—ցանում, հնածում, ամեն տեսակ աշխատանք կատարում մեքենաներով։ Մեքենայով աշխատելն այստեղ ել ձեռնտու յե, ինչպես և արդյունաբերության մեջ։ Լծկանի ոգնությամբ կամ ձեռքով կատարած աշխատանքը թե՛ շատ ժամանակ և խում և թե՛ թանկ ե նստում։ Որինակի համար՝ վերցնենք տրակտորի և լծկանի աշխատանքը։

«Ֆորձոն» տրակտորի 16 ժամյա բանվորական որվա աշխատանքը այս կերպ ե վորոշվում։

Տրակտորի արժեքի շիջուցումն 5 տարվա ընթացքում (5.400լ. բաժանած 5-ի վրա, կստանանք 480լ. տարեկան)։

Այդ կազմում և որական . . . . . 4 լ. 80 կ.

Վարկային ընկերությանը խոխառվության

դիմոց վճարվող տարեկան տոկոսները

(18%-ի հաշվով) . . . . . 4 լ. 32 կ.

Որական 4 փ. նավթ, 1 լ. 16 կոպեկով . . 4 լ. 64 կ.

Բենզին . . . . . 1 լ. 20 կ.

2 մոտորիստի աշխատավարձ . . . . . 4 լ. —

Յուղ քսելու համար . . . . . 2 լ. 60 կ.

Հերթական ուեմոնտ . . . . . 1 լ. 40 կ.

Զանազան ծախսեր . . . . . 1 լ. —

Ընդամեն որեկան 23 լ. 76 կ.

Այսպիսով՝ 16 ժամյա բանվորական որվա աշխատանքը հավասար ե 23 ուռելի 76 կոպեկի։ «Ֆորձոն» տրակտորը «Ոլիվեր» № 7 յերկմարմին խոփով, վոր միանգամից մեկ արշին տարածություն կարող ե վերցնել, մի ժամվա ընթացքում  $\frac{1}{4}$  դեսյատին հող ե հերկում։ Իսկ 16 ժամվա

ընթացքում (տրակտորիստները իրար փոխում են 8 ժամ աշխատելուց հետո)՝ 4 դեսյատին։

Բանից դուրս ե գալիս, վոր մի դեսյատին հող տրակտորով վարելու համար հարկավոր ե 5 լ. 94 կ. ծախս։ Յեթե ձիով (լծկանով) վարելու լինենք, ի՞նչ դուրս կգա։ Մի ձին կարող ե իր հետեւից քաշ տալ այնպիսի գութան կամ արոր, վորոնց խոփը կարող ե 6 դյույմ լայնությամբ հող վերցնել։ Յեթե ձին 10 ժամ աշխատի, նա կկարողանա միայն  $\frac{1}{3}$  դեսյատին հող վարել։ Մի դեսյատին հող վարելու համար հարկավոր ե 3 որվա աշխատանք։ Յեթե մարդու և ձիու աշխատանքը մի որվա ընթացքում գնահատենք 3 լ. 50 կոպեկ, կնշանակե, վոր մի դեսյատին վարելու համար հարկավոր ե 10 րուբլի 50 կոպեկ։ Հենց այս պատկերը ուարդ կերպով ցույց ե տալիս, վոր մեքենայով աշխատելիս յերկու անգամ եժան կազելի յե հողը վարել։

Բայց տրակտոր կամ մեքենա գնել ամեն մարդ չի կարող։ Ընդհանրապես գյուղատնտեսական մեքենաներ ամեն մի գյուղացի չի կարող գնել, մանավանդ՝ չքավոր կամ միջակ գյուղացին։ Վերջապես իմաստ ել չունի, յեթե փոքր անտեսություն ունեցող գյուղացին տրակտոր կամ մեքենա յե գնում։

Գյուղատնտեսական մեքենան կարող ե շատ ավելի ոգտակար լինել այն դեպքում, յեթե տնտեսությունը մեծ քանակությամբ հող ե վարում։ Որինակի համար՝ հաշված ե, վոր այն խոփը, վորը քաշում ե ձին, ոգտագործվում ե ինչպես հարկն ե՝ յեթե տնտեսությունն ունի վոչ պակաս 27 դեսյատին հող։ Շարքացանը, ծեծող մեքենան կարող են իրենց ծախքերը արդարացնել միայն 50—60 դեսյատին հողի վրա։ Իսկ շոգիյով ծեծող մեքենան լիովին կողտագործվի այն դեպքում, յեթե բերքը 200—250 դեսյատինից ե հավաքված։

Մեքենան խոշոր տնտեսության մեջ գործադրելով, համեմատաբար շատ ավելի բերք կարելի յե ստանալ, քան մանր տնտեսության մեջ: Յեթե գումարենք այն ծախըրելը, վոր կատարում ե մեծ տնտեսությունը (հողի վարձ, մեքենա, աշխատողների ռոճիկ), և հաշվի առնենք ստացված հազարավոր փութ հացահատիկը, կտեսնենք, վոր խոշոր տնտեսությունից 1 փութ հացահատիկը համեմատաբար ավելի քիչ ծախս ե պահանջել, քան մանր տնտեսության վեջ, ուրեմն և խոշոր տնտեսությունը շատ ավելի ոգուտ կտանա: Այս որինակներից պարզ ե, վոր խոշոր ձեռնարկությունն ավելի լավ և ձեռնտու յե, քան մանրը: Ահա թե ինչու մեծ գործարաններ կառուցելը, մանավանդ մեքենա շինող գործարաններ կառուցելը, մեծ նշանակություն ունի թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղական տնտեսության զարգացման համար:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ արդյունաբերության մեջ խոշոր գործարանները ավելի ձեռնտու յեն, քան մանրները:

Ինչո՞ւ ձիով (լծկանով) վարած հողը ավելի թանկ և նստում, քան տրակտորով վարածը:

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԵԿԱՎԱՐՈՂ. ԴԵՐ Ե ԿԱՏԱ-  
ՐՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ.

Հիմա մեզ համար բոլորովին պարզ ե, թե ինչու խոշոր արդյունաբերությունը, մանավանդ մետաղագործական և մեքենագործական արդյունաբերությունը միշտ առաջն տեղն են բոնում ժողովրդական տնտեսության մեջ: Առանց մետաղի, առանց յերկաթի ու պողպատի, առանց մեքենայի, վոր յերկաթից և պողպատից են շինում, չի կարող զարգանալ տնտեսության և վոչ մի ճյուղ:

Վորպեսզի պարզ լինի՝ մի որինակ բերենք, թե ինչ նշանակություն ունի մեքենագործական արդյունաբերությունը մեր յերկրում:

«Մոսկվա-գետի ափին փովել ե Կոլոմենսկի մեքենա շինող գործարանը: Գործարանում գիշեր և ցերեկ, առանց ընդհատման, բանվորները մետաղ են ծեծում, կոռում-կոփում: Յեվ Խորհրդային յերկրում ցրված հազարավոր գործարանների համար պատրաստում են մեքենաներ:»

Ասիայում, Ուրալ լեռների այն կողմը՝ Ուզբեկստանում կա մի ուրիշ գործարան: Այդ ևս խորհրդային գործարան ե, վորովհետև Խորհրդային յերկրումն ե: Գործարանը ֆերգան շրջանումն ե գտնվում, Ղուրղան-Տյուբեյում: Դա—պետական բամբակ մաքրող գործարանն ե՝ №5: Այդտեղ են բերում ուզբեկ գյուղացիք իրենց մշակած բամբակը: Բայց հեռավոր Ղուրղան-Տյուբեյում չեն կարող բամբակը մաքրել առանց մետաղի: Յեվ բարձր լեռների վրայով, դաշտերի վրայով Ասիայից գետի Յեվլոպա, Ուզբեկստանից գետի Ո.Ս.Ֆ.Խ.Հ., Ղուրղան-Տյուբեյից գետի Կոլոմենա թուչում ե հեռագիրը.

— Շարժիչ տվեք: Գործարանը չի աշխատում: Կենդանացրեք գործարանը, Կյանք տվեք նրան: Բամբակի գործարանում թող խփե մետաղե սիրտը:

— Կա՞ն, շարժիչներ կուղարկենք:

Անցնում ե ժամանակ: Յերկաթե գծերով գոլորշի և ծովիս արձակելով վազում ե շոգեկառքը, իր հետ տանելով մետաղե սիրտը Կոլոմենայից: Տանում ե նրան մի ուրիշ, հեռավոր յերկիր: Բայց նա ոտար յերկիր չե, նա ել խորհրդային ե:

Մեքենան պատրաստ ե: Միրտը սկսում է աշխատել— գործարանը աշխատում ե: Հազարավոր փութ բամբակ և մշակվում այստեղ, վորպեսզի ԽՍՀՄ միլիոնավոր բանվորների և գյուղացոց համար հագուստ պատրաստվի:

Հենց վոր մետաղյա մեքենագործական գործարանները կանգ են առնում, իսկույն կանգ են առնում յերկաթուղին, գործարանները, քայլայվում ե մանր արդյունաբե-

բությունը, մասսվում ե գյուղատնտեսությունը։ Այդպես  
եր քաղաքացիական պատերազմի ժամանակ։ Իսկ յերբ  
աշխատում են խոշոր գործարանները, —յերկրի արդյունա-  
բերությունը (թե միջակ և թե մանը), ինչպես և գյուղա-  
տնտեսությունը, կենդանությունն են ստանում։

Ահա թե ինչու ամեն մի յերկրում ել խոշոր գործա-  
րանային արդյունաբերությունը միշտ վճռական դեր ունի  
յերկրի տնտեսության մեջ, իր յետևից քարշե տալիս թե՛  
միջակ և թե՛ մանը արդյունաբերությունը, նույնպես և  
գյուղական տնտեսությունը։ Բոլոր յերկրներում խոշոր  
արդյունաբերության շնորհիվ առաջ յեկան մեծ քաղաք-  
ները, առաջացավ բուրժուազիան, կազմակերպվեց և ուժե-  
ղացավ բանվոր դասակարգը։

Միենույն ժամանակ՝ գյուղական տնտեսության հե-  
տամացությունն ու ցրվածությունը, կատարելագործված  
մեքենաների բացակայությունը գյուղը պահում ե զար-  
գացման ցածր մակերեսութիւնի վրա, գյուղը քաղաքից կախ-  
ման մեջ ե պահում։ Այդ ե պատճառը, վոր տնտեսա-  
կան հարցերում գյուղը միշտ յետ ե մնում քաղաքից։ Այդ  
ե պատճառը, վոր գյուղացիք իրենց իրավունքները պաշտ-  
պանելու համար չեն կարող պայքարել առանձին, առանց  
բանվոր դասակարգի։ Այդ հարցում գյուղացիք կարիք  
ունեն բանվոր դասակարգի ղեկավարության։

Այս ամենից պարզ ե, թե ինչ նշանակություն ունի  
խոշոր արդյունաբերությունը։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ չիթ պատ-  
րաստելը կախումն ունի յերկաթի ձուլումից։

Ինչո՞ւ գյուղական տնտեսությունը թուլանում ե, յեթե  
գործարանները չեն աշխատում։

Ինչո՞ւ գյուղացիությունը իր ուժերով չի կարող լա-  
վագույն տնտեսություն ունենալ։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒ-  
ԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ԱՐՏՍՍԱՎՄԱՆՈՒՄ։

Կապիտալիստները, գործարանների նախկին տերերը  
արդյունաբերությունից միայն մի բան եյին սպասում՝  
ողուտ, ողուտ և ողուտ։ Նրանք մի նպատակ ունեյին՝  
ինչքան կարելի յերանվորին շահագործել, գյուղացիներից  
հացը եժան գնով գնել, իսկ գյուղացուն իրենց ազգանքը  
թանկ գներով ծախել։

Սույն գրքի առաջին զրույցից մենք գիտենք, վոր կա-  
պիտալիստական յերկրների գյուղատնտեսությունը ավելի  
լավ հիմքերի վրա յեղած, քան մեզ մոտ։ Գյուղացին այն-  
տեղ մի գեպյատինից հավաքում ե 70, 120, նույնիսկ 180  
փութ հացահատիկ։ Այդ ամենից հետո միջակ գյուղացին  
արտասահմանում ապրում ե շատ վատ։ Այնտեղ ել, ինչ-  
պես մեզ մոտ առաջ յերբ ցարական կառավարություն  
եր, աշխատավոր գյուղացիության և կապիտալիստների  
միջև պայքար ե տեղի ունենում։

Այնտեղ կապիտալիստները, բանկերը, յերկաթուղին,  
վոր նույն կապիտալիստների ձեռքումն են, շահագործում  
են գյուղացուն։ Խոշոր կապիտալն ամեն կերպ հացի գինն  
իջեցնում ե, գյուղացուն վարկի ցանցում փաթաթում,  
կապիտալիստական կոռպերացիայի միջոցով ավելում և  
վոչնչացնում ե գյուղացուն։

Կապիտալիստական յերկրների միջակ գյուղացիու-  
թյունը միայն ձեականորեն ե ազատ, իսկ փաստորեն նա  
կախում ունի կապիտալիստից։ Աշխատում ե նրա՝ համար,  
մի քայլ անգամ չի կարող անել առանց նրան։ Կապիտա-  
լիստական յերկրի կոռպերացիան ևս չի կարող ազատել  
գյուղացուն կապիտալիստի ճանկերից։ Կոռպերացիան կար-  
ծես թե այնտեղ անկախ ե, բայց նա ել շատ լուրջ կեր-  
պով կախում ունի բուրժուազիայից։

Գյուղացիության մեծ մասը ճգնում է, գիշեր - ցերեկ աշխատում են վողջ ընտանիքով՝ ինչ է, թե մի կտոր հաց ճարեն, բայց վոշինչ չի դուրս գալիս։ Վերջիվերջո նրանք կորցնում են իրենց ինքնուրույնությունը, աղքատանում, ուժից ընկնում և դառնում վարձու բանվորներ, գնում են կապիտալիստի մոտ՝ նրա համար աշխատելու։ Կապիտալիստական գործարանը մեծանում և հարստանում ե՝ շահագործելով բանվորներին, քայլայելով գյուղացիներին։ Այդպես՝ կապիտալիստական արդյունաբերությունն իր յետեից քարշ ե տալիս գյուղական տնտեսությունը։ Քանի առաջ ե գնում, այնքան դրությունը վատանում է։ Գյուղացիների միջից հարյուրափոր և հազարափոր կուլակներ են առաջ գալիս, վորոնք դառնում են կապիտալիստների ընկերներ՝ չքավոր, աղքատ գյուղացիությունը շահագործելու, ավերելու համար։

Բոլորովին այլ կերպ ե վարվում պրոլետարական արդյունաբերությունը։

Գործարանի տերը — բանվոր դասակարգն է։ Այս նոր տերը արդյունաբերությունը կազմակերպում է վորոշ ծրագրով, վոր ի նկատի ունի վոչ միայն բանվորի շահերը, այլև նրա դաշնակցին՝ գյուղացու շահերը։

Բանվոր դասակարգն աշխատում ե՝ ինչքան հնարավոր ե ապրանքների գները իջեցնել, վորպեսզի գյուղացին կարողանա ձեռնտու գներով ապրանք ձեռք բերել։ Նա ամեն կերպ աշխատում է ուժեղացնել, զարդացնել կոռպերացիան, վորովհետեւ պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ կոռպերացիան այն միակ ճանապարհն է, վոր վողջ գյուղացիության տնտեսության զարգացմանը նպաստում է։

Ամեն կերպ կոռպերացիային ոգնելով՝ պրոլետարական սոցիալիստական արդյունաբերությունը գյուղին տալիս ե գյուղական տնտեսության համար մեքենաներ, տրակտոր և այլն։

Այժմ գյուղացիներից շատ շատերը հասկացել են, վոր գյուղական տնտեսությունը լավ հիմքերի վրա դնել, իրենց աշխատանքը հեշտացնել, իրենց տնտեսությունը ավելի ուժավետ դարձնել կարելի յե միայն այն դեպքում, յեթե գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ գործադրեն։ Այժմ գյուղն այնքան գյուղատնտեսական մեքենա յե մեզանից պահանջում, վոր մեր արդյունաբերությունը չի կարողանում հասցնել։

Խորհրդային Միության մեջ 1924 թվին գյուղացիք պահանջում եյին 24 միլիոն ռուբլու գյուղատնտեսական գործիքներ, իսկ 1926 թվին — 135 միլիոնի։

Մեր գործարաններում 1924 թվին գյուղատնտեսական գործիքներ են պատրաստվել 21 միլիոն ռուբլու, 1925 թվին — 65 միլիոն ռ., 1926 թվին — մոտավորապես 106 միլիոն ռուբլու։

Այս թվերը ցույց են տալիս, վոր մեր գործարաններում պատրաստված գործիքների թիվը չի բավարարում գյուղացու պահանջներին։ Պետք ե ասել, վոր մեր յերկրի գործարանները 1926 թվին  $2\frac{1}{2}$  անգամ ավելի գործիքներ են բաց թողել, քան այդ արվում եր նախապատերազմյան շրջանում։ Թե ինչպես ե ուժեղանում մեզ մոտ տրակտորի գործը, յերեսում ե հետևյալ թվերից։

1922 թվին ունեցինք 1,500 տրակտոր,

1925 » » 11,000 »

1926 » պատրաստվում ե 16,000 տրակտոր։

Շատ մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության համար ելեքտրական ուժը։

Մինչև 1921 թիվը գյուղական վայրերում կային միայն 100 ելեքտրակայարան, 1923 թվին — 321, իսկ 1925 թ. — 500-ից ավելի։

Վերջերս ելեքտրակայարանների թիվը շատ արագ մեծանում է։ Տեղերում կազմակերպվում են ընկերություններ։

Այժմ կան ամբողջ շրջաններ, վորտեղ ամբողջ գյուղեր ստանում են ելեքտրական լույս։ Այսպես, որինակի համար՝ Բորովիչեսկի—Վալդայի, Նովգորոդի նահանգում ելեքտրական լույս ե ստանում 230 գյուղ, վոր գյուղացիության 40% են կազմում։ Խ. Հայաստանում ևս տարածվում ե ելեքտրական լուսավորությունը։ Ալլահվերդու գործարաններին կից գյուղերում ելեքտրական լույս են ստանում գյուղացիք։ Շուտով Լենինականի և Յերևանի շրջակայքի գյուղացիությունը կոգտի Շիրջրանցքի և Յերևանի հիդրոկայարանի ելեքտրական լույսից։

Մենք կկարողանանք մեր յերկիրն ուժեղ ելեքտրակայարաններով հարստացնել միայն այն ժամանակ, յերբ Լենինի ծրագրած պլանը կկատարենք\*): Լենինն ասում եր, վոր 10 տարվա ընթացքում մեր յերկիրը պիտի ծածկենք խոշոր, ուժեղ ելեքտրակայարաններով։ Բայց այժմ մենք շատ աղքատ ենք, այնքան միջոց չունենք, վոր միանգամից անցնենք նոր ձեռի լուսավորության և աշխատանքի։ Բայց Խորհրդային իշխանությունը և Կոմունիստական կուսակցությունը Լենինի այս պատգամը անպատճառ կը կատարեն։

Ելեքտրակայարաններ շինելու համար մեր յերկիրը շատ հարմարություններ ունի։

Որինակի համար՝ մեր Զանգուե գետը, կամ Վոլխովիկան, վոր Լենինգրադից հեռու չի հոսում։ Թե՛ այստեղ և թե՛ այստեղ այդ գետերը արագահոս են։ Կարելի յե գետերի յերկու կողմից պատեր շինել, վորպեսզի ջուրն այդ պատերի միջից հոսի։ Իսկ նրանց մեջ գնում են տուրբին (մեքենա), վորը պառայտ ե գալիս ջրի հոսանքով։ Այսպես ել արել են։

\*). Կարգա այս գրքույիլ՝ «Թե ինչպես գյուղում ելեքտրականություն անցկացնել», հրատ. ԽՍՀՄ Ժողովրդ. Կենտրոնի, Մոսկվա, 1926 թ.։

Այդ ուժը տալիս ե եներգիա, վոր հարյուր հազարավոր բանվորների ուժի չափին ե համառում։ Յերկանի ելեքտրակայարանն արդեն պատրաստ ե և աշխատում ե։ Իսկ Վոլխովիկա գետի վրա շինվող կայարանը, վոր Վոլխովստրոյ ե կոչվում, արդեն ավարտվում ե և կարող ե 1½ միլիոն բանվորի ույժ տալ։ Այդ ուժը կարելի յե գործադրել և հաց հավաքելու, և ցանելու, և տավարի պետքերը հոգալու և ամեն տեսակ տնային աշխատանք կատարելու համար։

Վերցնենք, որինակի համար՝ հացահատիկ ծեծելու գործը։ Հացահատիկը հարդից բաժանելու համար հարկավոր ե ձի և մի մարդ, վոր մի ժամվա ընթացքում կարող ե 5 փութի չափ ցողեն ստանալ։ Իսկ ելեքտրական ծեծողմեքենան մի ժամվա ընթացքում կարող ե մինչև յերեքշորս հարյուր փութ հացահատիկ մաքրել։ Յեթե հնձածը ելեքտրական ույժով ծեծենք ու բաժանենք հարդից, ԽՍՀՄ մի տարվա ընթացքում ավելի կտանա կես միլիարդ փութ հացահատիկը, վոր այժմ կորչում ե։

Մեքենա կամ տրակտոր գնել, մանավանդ ելեքտրականություն անցկացնել իր տնտեսության մեջ, վոչ մի գյուղացի մենակ իր ույժերով չի կարողանում։ Բայց դրանից, փոքր տնտեսության մեջ մեքենան չի կարող իր ծախսերն արդարացնել։ Գյուղացին իր անմիջական ոգուտի համար ե, վոր կազմում ե «մեքենայի ընկերություն», դառնում ե կոոպերացիայի անդամ։

Գյուղացին կոոպերատիվի անդամ ե դառնում նրա համար, վորպեսզի հեշտությամբ կարողանա իր ընտանիքի պետքերը հոգալ, լավ սերմ ստանալ, եժան գնով ավրանք ստանալ, հողից մեծ քանակությամբ հացահատիկ ստանալ։ Այդ ամենը գյուղացին կարող կլինի անել միայն այն գեպքում, յեթե նա կոոպերացիայի և ընկերությունների միջոցով կապված լինի մեր սոցիալիստական արդյունաբերության հետ։ Իսկ այդ կնշանակե, վոր գյու-

զատնտեսությունն ել կպարզանա այն ճանապարհով, ինչ ճանապարհով մեր արդյունաբերությունն ե ընթանում, այսինքն՝ սոցիալիստական։ Քանի ուժեղանա և ամրանա գյուղական կոռակերացիան, այնքան նա պետական արդյունաբերության հետ իր կապերը կամրապնդի։

Մենք տեսանք, թե ուր ե դիմում գյուղացու տնտեսությունը կապիտալիստական յերկրներում և ուր ե տանում գյուղացուն պետական արդյունաբերությունը, վորքանվորական կառավարության ձեռքին ե։

Այստեղից ել մենք անում ենք հետեւյալ յեզրակացությունը. —

Կապիտալիստական արդյունաբերության զարգացումը՝ գյուղացիության շահագործումն ու քայլքայումն ե նշանակում, իսկ մեր պետական արդյունաբերության զարգացումը՝ նշանակում ե ուժեղացումն այն ուժի, վորը մեր յերկրի տնտեսությունը տանում ե դեպի սոցիալիզմ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. ԻՆՉՊԵ՞Ս՝ և արտասահմանի արդյունաբերությունը գյուղացիական մասնակին քայլքայում։

1926 թվին մեր յերկրի դաշտերում վո՞րքան տրակտոր և գործում։

Ինչո՞ւ գյուղական վայրերն ես պետք ե ելեքտրիֆիկացիայի յենթարկել։

Ինչո՞ւ գյուղական տնտեսության մեջ մեքենաների զարգացման հետևանքով զարգանում են արտելային ընկերությունները, կոռակերացիան։

Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒԹՅ՝ ՑԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱ. ՑՀԱ.

Մեր յերկրի արդյունաբերությունն այժմ համարյա 100% վերականգնած ե։ Բայց մեր նպատակն ե վո՞չ միայն հասնել հին չափերին, այլև նրանցից անցնել։ Մեր

առաջ այժմ դրված ե վերին աստիճանի դժվարին և պատասխանատու ինդիր։ Հարկավոր ե մեր յերկրի տնտեսությունն այնպիսի չափերի հասցնել, վորպեսզի կարողանանք աշխատավորության մեծացող կարիքներին բավարարություն տալ։

Այդ ինդիրը մենք պիտի լուծենք, ի՞նչ ե հարկավոր։

Առաջին հերթին պետք ե փոխել հին մաշված մեքենաներն ու գործարանները, նրանց փոխարեն կառուցել նորերը, ավելի լավերը և ավելի հարմարները։ Գործարանների մեքենաների մեծ մասը հին կառավարության որով արտասահմանից եր ստացվում, վորովհետև մեզ մոտ մեքենա պատրաստող գործարաններ բավական չափով չկային։ Այդ պատճառով ել մենք շատ գործիքներ ու մեքենաներ պատրաստել չելինք կարող։

Մեր յերկրորդ ինդիրն ե՝ կառուցել նոր գործարաններ, վորոնք կարողանան պատրաստել այնպիսի գործիքներ և մեքենաներ, վոր առաջ մեր յերկրում չեյին պատրաստվում։ Ամենազլավորն ե, վոր մենք կարողանանք ինքները շինել գործարանային մեքենաներ։

«Մենք մեր յերկրում, մեր ույժերով պիտի պատրաստենք մեքենաներ», — այդպես ասաց Կոմունիստական Կուսակցության XIV Համագումարը։ Համագումարի այդ վորոշումը կոչվում ե յերկրի ինդուստրիալիզացիայի\* Վորոշում։ Այստեղ ասված ե, վոր մենք պիտի շինենք առաջին հերթին այնպիսի գործարաններ, վորոնք կարողանան մեզ համար պատրաստել թե արդյունաբերության և թե գյուղական տնտեսության համար մեքենաներ։ Առանց մեքենայի մեր յերկրի տնտեսությունը չի կարող զարգանալ։ Ցեթե մենք մշտապես պիտի արտասահմանից մեքենաներ

\*.) Խնդրուսրիալիզացիա՝ խոշոր արդյունաբերություն։ Ցերկրի ինդուստրիալիզացիա՝ յերկրի արդյունաբերության զարգացում։

բերենք մեր յերկիրը, դա կնշանակե, վոր մենք միշտ ել արտասահմանի արդյունաբերությունից կախումն պիտի ունենանք: Իսկ դա ել իր հերթին կնշանակե՝ կախումն ունենալ ոտար կապիտալիստներից:

Իսկ մեր յերկրում հարմարություններ շատ կան: Մեր յերկրում կան յերկաթահանքերի մեծ պահեստներ, քարածուխ, պղնձահանք և ուրիշ մետաղներ: Այն ամեն նյութը, ինչ պետք է խոշոր գործարաններում աշխատելու համար, մենք ունենք: Ընկ. Ստալինն ասում ե՝ «Այն յերկիրը, ուր պրոետարիատն իր զիկտատուրան ե հաստատել և գտնվում ե կապիտալիստական ողակման մեջ, չի կարող տընտեսապես ինքնուրույն լինել՝ յեթե ինքն իր յերկրում չի պատրաստում արտադրության համար գործիքներ և միջոցներ, յեթե նա մնում է զարգացման այնպիսի աստիճանի վրա, վոր իր ժողովրդական տնտեսությունը ստիպված է կախման մեջ պահել կապիտալիստորեն զարգացած յերկրներից, վորոնք արտադրության գործիքներ և միջոցներ են պատրաստում: Կանգ առնել այդ աստիճանի վրա, — կնշանակե իրեն յենթարկել միջազգային կապիտալին»:

Յերկրի ինդուստրիալիզացիայի մասին կայացրած վորոշումը գյուղացու շահերին համապատասխանում ե:

Ինչ չափով վոր մենք կարողացանք լայնացնել, նորոգել և բանալ նոր մետաղագործական և մեքենա շինող գործարաններ, այն չափով ել ինդուստրիալիզացիայի կենթարկիլ գյուղատնտեսությունը: Ամեն տեղ, գյուղական տընտեսության մեջ ձեռքով, լծկանի ոգնությամբ կատարվող աշխատանքից կանցնեն մեքենաներով աշխատելու ձևերին: Կաշխատեն մեքենաները, տրակտորը, ելեկտրականությունը:

Մեր քիմիական արդյունաբերության զարգացման հետ կապված ենակ քիմիայի ոգտագործումը գյուղատնտեսության մեջ: Այդ կնշանակե, վոր հողն ավելի լավ կպա-

րարտացվի և պայքար կմղվի դաշտային թշնամիների՝ մկների, մորեխի դեմ և այլն:

Մեքենաներով աշխատելիս, գյուղական տնտեսությունը կանցնի նոր և ձեռնտու աշխատանքի, — շաքարի ձակնդեղի ցանքսին, արեածաղկի, տեխնիկական բույսերի մշակությանը, վոր ավելի ոգտակար ե, քան հացահատիկ ցանելը: Այդպիսով, մեր յերկրի ինդուստրիալիզացիան, վոր սկսվում է մեքենա շինող գործարաններից, կտարածվի արդյունաբերության բոլոր ճյուղերի վրա, իսկ նրանցից ել գյուղական տնտեսության վրա:

Ինդուստրիալիզացիան պիտի կերպարանափոխե յերկրի տնտեսությունը, հետևապես և գյուղական տնտեսությունը: Բայց վորպեսզի մեր գործարանները նորոգենք, կառուցենք նորերը, հարկավոր են միջոցներ: Վո՞րտեղից ճարենք: Կարելի յեր արտասահմանում փոխարինաբար վերցնել: Բայց կապիտալիստները մեզ փոխարինաբար չեն տալիս: Ուրեմն հարկա վոր ե միջոցներ գտնել մեր յերկրում:

Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն 1926 թվի ապրիլ ամսին այդ հարցի վրա լուրջ ուշադրություն դարձրեց: Նա յեկավ այն յեզրակացության, վոր միջոցներ մեր յերկրում կարելի յե ճարել: Զե՞ վոր մեր յերկրի պետական արդյունաբերությունը, պետական առեստուրը, բանկերը — պետության ձեռքին են: Հարկավոր ե այդ փողերն այնպես ծախսել, վոր նրանց գլխավոր մասը հատկացվի նոր գործարաններ հիմնելուն: Ամեն մի կոպեկը հարկավոր ե խնայել: Այդ պատճառով կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն հրահանգեց յերկրում անցկացնել «խնայողության ոեժիմ», անդադար կոիվ մղել անողուտ և իզուր ծախքերի դեմ:

«Մեր տնտեսության մեջ մեծ մեծագույն և մեծագույն խնայողություն անելու գնով միայն կարելի յե հասնել

այն բանին, վորպեսզի ամեն մի փոքրիկ խնայողությունը հավաքվի մեր խոշոր մեքենական ինդուստրիայի զարգացման համար», ասում եր ընկ. Լենինը իր վերջին հողվածներից մեկում:

Այդ պատգամի իրագործումը—մեր եյական նպատակն ե այժմ, վոր դրված ե ամեն մի կուսակցականի և կոմյերիտականի առաջ՝ Յուրաքանչյուր քայլ այդ ուղղությամբ—սոցիալիզմի իրագործման քայլն ե, վոր աշխատավորությունը տանում ե դեպի հաղթանակ, նրան աղատելով չքավորությունից և խեղճությունից:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ ե նշանակում ինդուստրիալիզացիա:

Ինչո՞ւ մեր յերկրի ինդուստրիալիզացիան այժմ մեր գլխավոր խնդիրն ե:  
Ինչո՞ւ ե հարկավոր «խնայողության ռեժիմը»:

ԻՆԴԻԲՆԵՐԻ ԿԱՐԴԱՑԱԾՔԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Յեթե մոտակայքում կա ելեքտրակայարան, գնացե՛ք երսկուրսիայի, ծանոթացե՛ք նրա աշխատանքներին:  
Իմացե՛ք, կա՞ արդյոք ձեր շրջանում տրակտորիստների դպրոց, Աշխատեցե՛ք, վոր ձեր գյուղից մի-յերկու յերետասարդ գնան այնտեղ սովորելու:

Բջիջում դրե՛ք զեկուցում այս թեմայով. «Ի՞նչ ե խնայողության ռեժիմը», և իմացե՛ք, թե այդ ուղղությամբ ինչ ե արված ձեր շրջանում:

Զրոյց լեռորդ

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ.

Մենք արդեն գիտենք, վոր ԽՍՀ Միության մեջ հողագործությունը ազգաբնակչության գլխավոր զբաղմունքն ե կազմում, վորովհետև ժողովրդի մեծ մասը գյուղացիներ են: Այժմ տեսնենք, թե ի՞նչ դրության մեջ ե գտնվում մեր գյուղական տնտեսությունը և ի՞նչ միջոցներով մենք պիտի նրա դրությունը բարելավենք:

Յեթե մեր գյուղական տնտեսությունը համեմատենք արտասահմանի գյուղական տնտեսությունների հետ, կտեսնենք, վոր թե՛ առաջ և թե՛ հիմա մենք շատ յետ ենք մնացել այդ խնդրում: Մեր գյուղական տնտեսությունը չափազանց աղքատ վիճակում ե գտնվում:

Որինակի համար՝ վերցնենք բերքի խնդիրը: Յուրաքանչյուր դեսյատին հողը վո՞րքան բերք ե տալիս մեզ մոտ և վո՞րքան՝ արտասահմանում: Մենք բերում ենք հետեյալ պատկերը: Լավ նայեցե՛ք, և դուք կտեսնեք, թե մի դեսյատին հողից քանի փութ հացահատիկ են հավաքում գյուղացիները զանազան յերկրներում,

|                         |           |
|-------------------------|-----------|
| Հոլանդիայում՝ . . . . . | 170 փութ, |
| Բելգիայում՝ . . . . .   | 156 փութ, |
| Անգլիայում՝ . . . . .   | 147 փութ, |
| Գերմանիայում՝ . . . . . | 132 փութ, |
| ԽՍՀՄ՝ . . . . .         | 45 փութ,  |

Այս թվերից յերկում ե, վոր արտասահմանի գյուղացիությունը մեր գյուղացիության համեմատությամբ յուրաքանչյուր գեսյատինից յերկու, յերեք, չորս անգամ ավելի յե հացահատիկ ստանում:

ԽՍՀՄ մեջ ցորենի մի գեսյատին ցանքսից ստացվում ե միջին հաշվով 47 փութ, Բելգիայում՝ 156 փութ, Գերմանիայում՝ 148 փութ:

ԽՍՀՄ մեջ վարսակի մի գեսյատին ցանքսից միջին հաշվով ստացվում ե 54 փութ, Բելգիայում՝ 158 փութ, Գերմանիայում՝ 127 փութ:

Յեզրոպայում չկա մի մեծ յերկիր, ուր բերքը լինի այնպես, ինչպես մերն ե:

Մեր բերքը վոչ միայն վատ ե, այլ և անհուսալի յե: Նրա բախտը շատ անգամ կախված ե բնական տարերքներից: Դարավոր հետամնացությունը մեզ ստիպում ե միշտ կախումն ունենալ բնության զանազան փոփոխություններից: Մեր հողը, պապենական հին ձևով մշակելու շնորհիվ, ուժից բոլորովին ընկել ե: Հողը մշակվում ե շատ թերի, միշտ ցանքում են միենույն հացահատիկները, արտերը չեն մաքրվում անպետք խոտերից, չեն դործածվում պարարտացման նյութեր:

Գիտության տված տեղեկությունների համաձայն, ամեն 3 տարին մի անգամ մեզ մոտ բերքը վատ ե լինում: Հինգ տարին մի անգամ մի շարք նահանգներում յերաշտ ե լինում, իսկ 10 տարին մի անգամ, սովոր տարածվում ե յերկրի մեծ մասերում, վոր ժողովրդի համար դառնում ե սոսկալի:

Մեր յերկրում կովը տարեկան 50—60 վեդրո կաթ ե տալիս: Շատ հազվագյուտ դեպքերում՝ 100 վեդրո: Դանիայում 180 վեդրո կաթ տվող կովը համարվում ե անպետք: Այդպիսի կովը մորթում են՝ միաը ծախելու համար: Ամերիկայում կամ Անգլիայում մսացու կովերը յերկու անգամ ծանր են մեր կովերից:

Մեր գյուղացիությունը՝ ապրում ե միայն հացահատիկներ ցանելով, կարծելով թե գյուղացուն միայն ա'յդ բերքը կարող ե ոգուտ տալ: Մեզ մոտ համարյա չեն պարապում թոշաբուծությամբ, կտավատաբուծությամբ, բանշարաբուծությամբ և այլն:

Մեր գյուղական անտեսությունը վերին աստիճանի խեղճ գրության մեջ ե գտնվում: Հարկավոր ե, վորպեսզի ամեն մի գյուղացի այդ մասին մտածե:

Զկարծեք թե արտասահմանի չքավոր և միջակ գյուղացին կարող ե իր հողերից առատ բերք ստանալ և լավ ապրել: Այնտեղի չքավոր և միջակ գյուղացիությունը վերին աստիճանի դժվար դրության մեջ ե գտնվում: Նրանք կուակի, չարչու և կապիտալիստի ճանկերումն են գտնվում: Արտասահմանի արտերը լավ բերք են տալիս նրան, ով յերկրագործական աշխատանքների ժամանակ կարողանում ե մեքենա գործադրել, հողը պարարտացնել և վերջապես ով կարողանում ե վարձել մեծ թվով բատրակներ: Իսկ այդ միջոցներով հողը մշակել կարող են միայն հարուստ գյուղացիք, ֆերմերները (կալվածատերերի հողերը վարձով վերցնողներին այդպես են անվանում) և կալվածատերերը: Յեթե ցանքսին հատկացրած հողաբաժինը մեծ ե, յեթե լավ և տեսակ-տեսակ մեքենաներ են գործադրում հողը մշակելիս և յեթե շատ բատրակներ յեն աշխատեցնում, — այդ դեպքում հողը լավ բերք ե տալիս:

Արտասահմանում միջակ գյուղացին չի կարողանում այդ տեսակ մեծ և հարուստ հողաբարերի հետ մրցել,

դրա համար ել նա տարեց-տարի աղքատանում ե, իսկ չքափոր գյուղացին համում ե այն վիճակին, որ ստիպված ե լինում թողնել յերկրագործությունն ու դառնալ բատրակ, կամ բանվոր։ Բայց մի բան չի կարելի մոռանալ։ Այդ այն ե, զոր արտասահմանի արտերը մեր արտերից ավելի յեն բերք տալիս։

Ի՞նչ ե պատճառը։

Նախ՝ ընդհանուր հետամնացությունը։

Իսկ Ռուսաստանի գյուղատնտեսության այդ խեղճ դրության պատճառը գլխավորապես այն ե, զոր յերկար ժամանակ այստեղ ճորտական իրավունքն եր իշխում։ Ճորտությունը վերջանալուց հետո ել գյուղացու դրությունը չափացավ։ Գյուղացին իր գլխին յերեք տեր ուներ՝ կալվածատերը, կապիտալիստը և պետությունը։

Ռուսաստանի գյուղացիությունը ճորառության իրավունքը վերանալուց (1861 թ.) հետո ևս շարունակ աղքատանում եր։ Դրա պատճառն ել այն եր, զոր 1861 թ. գյուղացիների «ազատությունը» կապիտալիստներին, կալվածատերերին իրավունք տվեց հիսուն տարվա ընթացքում անարգել թալանել, կողոպտել, աղքատացնել գյուղացիներին՝ սրանց ստացած հողի դիմաց սրանցից մեծամեծ գումարներ առնելով։

Լենինը հետեւյալն ե ասում այդ առթիվ. —

«Այդ—դանդաղ, տանջալից, մահացման պրոցես\* ) եր։ Գյուղացուն հասցըել եյին մինչև մուրացկանի վիճակի... Գյուղացիք անընդհատ սովոր եյին մատնված և յերաշտի տարիներին տասնյակ հազարներով մետնում եյին քաղցից և համաձարակներից։ Իսկ այդպիսի տարիներ հետզհետեւ ավելի ու ավելի հաճախ եյին լինում»։

\*) Պրոցես—պարգացման ընթացք։

1861 թվից հետո գյուղացիք շատ քիչ հող ստացան, այն ել բարձր գներով։ Գյուղացիք ստիպված եյին վճարել թե՛ հողի գինը և թե՛ հարկեր։

Գյուղացիների ստացած հողը այն ժամանակա գներով արժեր 600 միլիոն ռուբլի, իսկ վորոշված եր գյուղացիներից հողի համար ստանալ 867 միլիոն ռուբլի (վոսկով), այսինքն՝ նրա արժեքից մեկ ու կես անգամ ավելի։

Ցարի կառավարությունը այդ գումարը համարյա իսկույն վճարեց կալվածատերերին, իսկ հետո ամբողջ գումարն սկսեց հավաքել «ազատագրված» գյուղացիներից հարկերի և տուրքերի ձեռվ։ Մինչև 1905 թիվը գյուղացիք այդ վճարների ծանրության տակ առավում եյին։

Մինչև 1903 թիվը կառավարությունը գյուղացիներից այդ գումարի հաշվին արդեն ստացել եր 1 միլիարդ 457 միլիոն ռուբլի (վոսկով)։

Կառավարությունը իր հաշվով գյուղացիներից գեռ ստանալու յեր ևս 400 միլիոն ռուբլի։ Միայն 1905 թվի հեղափոխությունը ազատեց գյուղացիներին այդ մնացորդներից։ Պարզ ե, զոր այդ տուրքի ծանր մասն ընկնում եր խեղճ, աղքատ գյուղացու վրա։

Հարց ե ծագում։ Կարո՞ղ եր արդյոք աղքատ, չքափոր գյուղացին զարգացնել իր տնտեսությունը։ Չե՞ վոր իր հասույթի մեծ մասը ևս ստիպված եր պարտքի, հարկերի և պետական տուրքերի տեղ տալ։ Միանգամայն պարզ ե, զոր աղքատ գյուղացիությունը ստիպված եր հողը մշակել այն միջոցներով, ինչ միջոցներով մշակում եյին նրա պալերը։

Այժմ տեսնենք, թե ինչպես եր հողը բաժանված գյուղացիների միջև։

10½ միլիոն չքափոր և միջակ անտեսություններըն ունեյին . . . . 76 միլիոն, դես, հող,

1 միլ. ունեոր տնտեսութ.՝ . . . 15 միլ. դես. հող.  
 1½ միլ. կուլակները՝ . . . 70 » » »  
 30 հազար կալվածատերերը՝ . . 70 » » »  
 30 հազար կալվածատերերն ունեյին համարյա այնքան հող, վորքան տաս ու կես միլիոն գյուղացիները: Նույնը պետք ե ասել նաև կուլակների նկատմամբ: Տասը չքավոր և միջակ գյուղացիք ունեյին այնքան հող, վորքան մեկ կուլակը:

Զպիտի մոռանալ, վոր կալվածատերերն իրենց համար եյին պահել հողի ամենալավ, ամենաբերի մասերը:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչո՞ւ մեր գյուղական տնտեսությունը ոտար յերկրների համեմատությամբ ավելի քիչ արդյունք ե տալիս:

Արտասահմանում վո՞ր գյուղացիներն են լավ ապրում: Ի՞նչպե՞ս եր հողը բաժանված Ռուսաստանում ճորտության վերացումից հետո:

Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914—17թ.) չքավոր գյուղացիության գրությունը վատացավ:

Ցարի կառավարությունը պատերազմի համար հավաքեց միլիոնավոր յերիտասարդ մարդկանց, անթիվ ձիեր և այլն: Գյուղացու դրությունը դարձավ անտանելի: Աշխատող ուժերից գյուղացին զրկվեց, հողը մնաց անմշակ: Քաղաքի այն գործարանները, վորոնք պատրաստում եյին գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, պատերազմի ժամանակ սկսեցին պատերազմական գործիքներ պատրաստել: Տնտեսությունն սկսեց քայլայվել:

1917 թ. հոկտեմբերին իշխանությունն անցավ բանվորների և գյուղացոց ձեռքը: Կապիտալիստներն ու կալվածատերերը մեր դեմ սկսեցին պատերազմ: Այդ պատերազմը, վոր քաղաքացիական\*) ե կոչվում, ավելի

\*) Քաղաքացիական պատերազմի մասին մանրամասն կիսումի «Կարմիր բանակ» դիմում:

և քայլայեց, թուլացրեց մեր գյուղական տնտեսությունը: 1922 թվին մեր յերկրի գյուղատնտեսությունը հասել երշատ խեղա վիճակի, յեթե համեմատելու լինենք նախապատերազմյան շրջանի դրության հետ: Կրճատվել եր ցանքսի մակարդակը. 1913 թվի յուրաքանչյուր 100 ցանքած դեսյատինի փոխարեն 60 դեսյատին եր ցանքում: Ռուսաստանում առաջ, ամեն տարի, արտերից չորս և կես միլիարդ փութ հացահատիկ եր հավաքվում, իսկ 1922 թ.՝ 1 միլիարդ 800 միլիոն փութ: Կրճատվել եր անասունների քանակը:

1916 թ. կար 30 միլիոն ձի, 1922-ին մնացել եր քսան միլիոն: 1916 թվին կովերի թիվը հիսուն միլիոնի յեր հասնում, 1922-ին՝ 35 միլիոնի: Կրճատվել եր յերկրագործական գործիքների և մեքենաների քանակը: Նոր մեքենակամ գործիք համարյա չեյին պատրաստում, իսկ հները մաշվում եյին:

Բանվորա-գյուղացիական կառավարությունը չեր կարող իսկույն բարելավել գյուղական տնտեսությունը: Հարկավոր եր նախ և առաջ յերկիրն ազատել Սպիտակներից, վորոնք ցանկանում եյին հին կարգերը վերականգնել: Հեղափոխությունը գյուղական տնտեսության համար հնարավորություն ստեղծեց վոտքի կանգնելու և առաջադիմելու:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ ազդեցություն ունեցավ թագավորի սարքած պատերազմը գյուղական տնտեսության վրա:

Ի՞նչո՞ւ գյուղացիությունը հեղափոխությունից անմիջապես հետո չկարողացավ, ինչպես հարկն ե, զբաղվել եր տնտեսության վերականգման գործով:

Ի՞նչ Տվեց ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ.  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՄԿԻԶԲԸ.

Ի՞նչ տվեց հեղափոխությունը գյուղացուն:

Նախ՝ հեղափոխությունը գյուղացուն ազատեց թագավորական պարտքերը վճարելուց (այդ խոշոր գումարները թագավորը պարտ եր ոտար պետություններին): Այդ պարտքերը յեթե բաժանենք մեր յերկրի ազգաբնակչության թվի վրա՝ կտացվի հետեւալը.—ամեն մի մարդուն կընկնի 230 ռուբլի պարտք:

Յերկրորդ՝ աշխատավորությունը ստացավ 40 միլիոն դեսյատին հող: Առաջ հարյուր դեսյատին վարելահողի միայն 50—70 դեսյատինն եր գյուղացիությանը պատկանում: Այժմ 100 դեսյատինից 96-ը գյուղացու ձեռքին ե: Հողի շատ քիչ մասը հանձնվեց խորհրդային տնտեսություններին, վորոնք պիտի գյուղացու պետքերը հոգան և նրան ոգնեն: Այդ տնտեսությունների մեջ պետք ե մշակվեն ընտիր տեսակի սերմեր, խոտեր, արդյունաբերական-տեխնիկական բույսեր, ընտիր անասուն և այլն:

Խորհրդային տնտեսությունները ունեն ընդամենը յերկու ու կես միլիոն դեսյատին հող, կամ մեր յերկրի վարելահողի հարյուր դեսյատինից՝ յերեքը: Կոմունաները և արտելները ունեն ընդամենը հարյուր դեսյատինից՝ մեկ դեսյատին:

Բացի գրանից, Խորհրդային իշխանությունը իր գոյության հենց առաջին որից պետության սեփականություն դարձրեց հողը: Այդ կնշանակե, վոր վոչ վոք իրավունք չունի հողը գնել կամ ծախել: Այլևս հողը մասնավոր սեփականություն չե: Մասնավոր մարդիկ այլևս չեն կարող վարվել իրենց հողի հետ այնպես, ինչպես իրենք կամենան: Խորհրդային իշխանության որենքներով հողը մասնավոր սեփականություն լինել չի կարող: Խորհրդային

կառավարությունը հողը բավել ե հողագործին, վորպեսզի նա աշխատի հողի վրա և ոգտվի:

Ասացինք, վոր Խորհրդային կառավարության կողմից, հողը տրված ե հողագործին, վորպեսզի նա մշակի: Գյուղացին միշտ, առանց ժամանակի սահմանափակման, իրավունք ունի ոգտվել հողից: Յեթե այդպես ե, ինչո՞ւ համար հողը պետության սեփականություն ե հաշվում: Ավելի լավ չե՞ր լինի, յեթե Խորհրդային պետությունը որենք հրատարակեր և ասեր, թե հողը դառնում ե գյուղացու սեփականություն:

Քննենք այդ հարցը:

Ամենից առաջ հարկավոր ե մի հարց վորոշել: Արդյո՞ք ձեռնտո՞ւ կինի չքավոր և միջակ գյուղացուն, յեթե հողը դառնա գյուղացու սեփականություն: Չե՞ վոր հողը գյուղացու սեփականություն դարձնել, կնշանակե իրավունք տալ հողը գնել և ծախել: Մենք գիտենք, վոր չքավոր գյուղացիությունը այդ դեպքում ստիպված պետք ե լիներ իր հողը ծախել հարուստին: Իսկ այդ կնշանակեր—նոր կալվածատեր առաջ բերել: Այսինքն՝ նորից չքավոր և միջակ գյուղացին ստիպված պիտի լիներ դառնալ ճորտ:

Քաղաքացիական պատերազմի տարիների ընթացքում (1918—21 թ.) գյուղացիներն այնքան ել լավ չելին իրենց պատկերացնում, թե ինչ խոշոր նշանակություն ունեն նրանց համար Խորհրդային իշխանության տված հարմարությունները: Հենց վոր քաղաքացիական կոիվը վերջացավ, գյուղացու տնտեսությունը շատ արագ կերպով սկսեց լավանալ: Ի՞նչ եր պատճառը: Հողի մասնավոր սեփականությունը վոչնչացվել եր. այն մեծ ու ծանր հարկը, վոր հին կառավարությունը գրել եր գյուղացուներին, այժմ բոլորովին վերացվել եյին: 1913 թվին ցանքսերի տարածությունը 104 միլիոն դեսյատինի յեր

համուռմ, իսկ 1922 թվին՝ միայն 58 միլիոնի։ Զորս տարվա  
ընթացքում մեր յերկրի ցանքսերի տարածությունը  
(1926 թ.) հասավ 90 միլիոն դեսյատինի։ Այդ մի խոշոր  
հաջողություն եր, վոր ձեռք բերվեց հսկայական ճիգերով.  
այսպիսով մենք համեմատաբար արագ հասանք ներկա  
վիճակին. այժմյան ցանքսերի տարածությունը ԽՍՀՄ մեջ  
կազմում ե նախապատերազմյան շրջանի ցանքսերի մոտ  
100 տոկոսը։

Զիերի թիվը—

1912 թվին՝ 30 միլիոն, 1922 թվին՝ 19 միլիոն,  
1925 թվին՝ 23 ու կես միլիոն։

Այսպիսով, 1925 թվին ձիերի թիվը համուռմ եր նա-  
խապատերազմյան շրջանի 80 %։

Խոշոր յեղջյուրավոր անասունների թիվը—

1914 թվին՝ 51 ու կես միլիոն, 1921 թվին՝ 35 մի-  
լիոն, 1925 թվին՝ 48 միլիոն։

Այս ամենը ցույց ե տալիս, վոր 1922 թվից սկսած մեր  
գյուղական տնտեսությունը արագ կերպով զարգանում է։  
Ցանքսի մակարդակը մեծանում է, իսկ նրա հետ ել շա-  
տանում ե անասունների քանակը։ Բայց այդ ամենը դեռ  
շատ քիչ է։ Նախապատերազմյան շրջանի քանակը մեզ չի  
կարող բավարարել։ Պետք ե ավելի առաջ գնալ։ Յեվ գնալ—  
վոչ այն ճանապարհով, ինչ ճանապարհով գնում եր հին  
կառավարությունը։ Պետք ե գործադրել նոր գործիքներ,  
մեքենաներ, տրակտոր։ Անհրաժեշտ ե, վորպեսզի այնտեղ,  
վորտեղ առաջ մի հասկ եր բանում, այժմ 3—4 հասկ բանի։  
Յեթե մի հասկը տալիս եր 15—20 հատիկ, այժմ տա՞ 50—60  
հատիկ։ Հարկավոր ե զարգացնել գյուղատնտեսությունը,  
լայնացնել գյուղատնտեսության այն բաժինները, վորոնք  
գյուղացուն թե՛ ձեռնտու յեն և թե՛ անհրաժեշտ։ Մի խոս-  
քով՝ հարկավոր ե միջոցներ ձեռք առնել, վորպեսզի գյու-  
ղացին լինի թե կուշտ, թե առողջ և թե զարգացած։

Գյուղացին այդ ճանապարհով գնալ և մշտական քաղցի,  
աղքատության ճանկերից ազատվել կարող ե միմիայն  
Խորհրդային իշխանության որպէս, սոցիալիստական ար-  
դյունաբերության շնորհիվ, բանվոր դասակարգի դեկավա-  
րությամբ։

Հարկավոր ե նախ և առաջ գյուղական տնտեսու-  
թյունը այնպես կազմակերպել, վորպեսզի գյուղացին գոր-  
ծադրի մեքենա և առաջնորդվի գյուղատնտեսական գի-  
տության տված ցուցմունքներով, իսկ դրա համար պետք  
ե նախ և առաջ նախապատրաստական աշխատանք կա-  
տարել։ Հարկավոր ե հողաբաժնության կարգը միանգա-  
մայն և հիմովին փոխել։ Ահա՝ թե ինչու Խորհրդային իշ-  
խանությունը հսկայական նշանակություն ե տալիս հողա-  
շինարարությանը։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ տվեց հեղա-  
փոխությունը գյուղացուն։

Ի՞նչո՞ւ գյուղացիության մեծ մասի համար ոգտակար  
ե այն որենքը, վորով հողը ընդհանուրի սեփականություն և  
համարվում։

1922 թվից ի՞նչպես սկսվեց գյուղացիական տնտեսու-  
թյունը վերականգնել։

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴԵՊԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ.

Հողաշինարարությունը պետք ե վերացնի այն թե-  
րությունները, վորոնք վասա են հասցնում գյուղացիական  
տնտեսությանը։ Հողաշինարարությունը պետք ե վոչ միայն  
վերացնի հողային անբարեկարգությունը, այլև պետք ե  
ստեղծի այնպիսի պայմաններ, վորոնք դյուրացնեյին տըն-  
տեսավարության ավելի կատարելագործված յեղանակներին  
անցնելը։ Պետք ե գյուղացիներին ցույց տալ և ապացուցել  
վոր հողի փոքր, իրարից կտրտված նեղ շերտերի վրա ցանքս  
անելը վասակար ե. պետք ե ապացուցել, վոր ավելի

ոգտակար ե՛ ցանքսն ընդարձակ տարածությունների վրա կատարել միացած ուժերով, քանի վոր ընդարձակ տարածության վրա և տրակտորը լավ կը անի, և իզուր չեն կորչի փոքրիկ հողամասերի, վարելահողի նեղ շերտերի սահմանները վորոշելու համար թողնված (չցանվող, չոգտագործվող) մասերը: Նույնպես և անհրաժեշտ ե հասկացնել, վոր մեծ գյուղերը պետք ե բաժանվեն գյուղակների, ընտանիքներից յուրաքանչյուրը իր տնտեսությունը կառավարելու խնդրում չպետք ե մեկուսացած լինի, քանի վոր յերբ հողագործները մեկուսացած են լինում իրենց հողաբաժինների վրա, առանձին տնտեսությունների գործակցությունը չափազանց դժվարանում ե, մինչդեռ կան շատ աշխատանքներ, վոր մեկ տնտեսության ուժերից վեր են\*):

Յեթե կան համապատասխան պայմաններ, պետք ե միանալ և կազմել հողագործական արտեներ և ընկերություններ:

Բայց այս հարցում յերբեք չպետք ե գործել հրամաններ արձակելով, հարկադրելով: ՀԿԿ (թ) կենտրոնական կոմիտեն և Խորհուրդների Համամիութենական III-րդ համագումարը կայացրել են վորոշումներ, վորոնց մեջ նրանք գտնում են, վոր անհրաժեշտ ե աջակցել հողամշակության այդպիսի ձևերը գործադրողներին, քանի վոր այդ ձևերով կատարված հողամշակությունը կողնե գյուղական - տնտեսությունների կոռպերացմանը. սակայն նրանք վոչ մի արգելք չեն դնում և հողամշակության ձևերի ընտրության ազատություն են առլիս՝ համաձայն հողային որենսությի:

Միջոցների և հողաշնարարական աշխատավորների պակասությունը մեղ հնարավորություն չի տալիս հողային

\*) Զե՞ռք բեր և կարդա՛ «Հողաշնարարություն» գրքույզը, հրատարակություն ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական Հրատարակչության, Մոսկվա, 1926 թ.:

անբարեկարգությունը շտապ վերացնելու: Բայց և այնպես, այդ խոշոր թերությունը մենք տարեց-տարի շըտկում ենք:

Խորհրդային իշխանությունը լուրջ ուշադրություն է դարձնում՝ յերկրագործին նաև մեքենա և գործիքներ մատակարարելու հարցի վրա: Մեր յերկրի գործարաններում 1924—25 թվին գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ են պատրաստել  $1\frac{1}{2}$  անգամ ավելի, քան 1913 թ.: Բացի այդ ամենից, մենք այժմ պատրաստում ենք բազմաթիվ տրակտորներ, վորոնց մասին առաջվոչ վոքչեր ել մտածում: Անցյալ տարվա (1925 թ.) ընթացքում ԽՍՀՄ գյուղացիությանը բաց ե թողնված 65 միլիոն ռուբլու գործիք և մեքենա:

1926 թվի ծրագրով, գյուղը պիտի ստանա 106 միլիոն ռուբլու գործիք ու մեքենա: Անցյալ տարի մեր յերկրում արդեն աշխատանքի եյին անցել 11 հազար տրակտոր, իսկ 1926 թվին գյուղացիք պիտի ստանան ևս 16 հազար տրակտոր: Կնշանակե տրակտորների թիվը մեր յերկրում հասնում ե 27 հազարի: Բայց այդ—չափազանց քիչ ե: Որեցոր գյուղացոց պահանջը մեծանում ե: Գյուղացին պահանջում ե մեքենա, տրակտոր, գործիք: Այնտեղ, ուր մեքենա յե աշխատում, ուր տրակտոր ե գործում, այնտեղ մանր, ցրված գյուղական տնտեսությունները միանում են, կազմում ընկերություններ, կոոպերատիվներ, աշխատում ընդհանուր ուժերով: Գյուղացու վիճակն ել այդ գեպքում լավանում ե: Ահա հենց այստեղ ե, վոր գյուղի համար սկսվում են նոր կյանքի առաջին որերը, յերբ ցրված, մանր և խեղճ տնտեսությունները միանում են, կազմակերպվում: Յերկրագործությունը բոլորվին նոր ձև և ստանում: Գյուղացիք անցնում են հողագործության նոր, ավելի կատարելագործված ձևերի: Որինակի համար՝ ամեն տարի նորանոր գյուղական խմբեր

անցնում են հողամշակության բազմադաշտյան սիստեմին։ Այդ նոր ձևի յերկրագործության անցնող գյուղացիների թիվը վերջին տարիների ընթացքում տարեկան հասնում է 200 հազար ընտանիքի։ Մեծ տեղ ե գրավում այժմ մեր գյուղատնտեսության մեջ խոտացանքսի գործը։ Նույնիսկ հին չափերից ել ենք անցել։ Այդպիսով ուժեղանում ե մեր յերկրագործությունը, — գյուղացիք սկսում են մշակել արդյունաբերական-տեխնիկական բույսեր։

Խորհրդային իշխանությունը մեծ հարմարություններ ե տալիս այն գյուղացոց, վորոնք անցնում են հողամշակության բազմադաշտյան սիստեմին, ցանում են տեխնիկական բույսեր, հողն են զցում ազնիվ սերմեր, իրենց տափարը ազնվացնում են. մանավանդ նրանց, վորոնք ցանքսի անհարմար հողաբաժինները, որինակի համար՝ ճահիճները չորացնում են, անջրդի հողերը վոռոգում և հարմարեցնում են ցանքսի համար և այն։

Խորհրդային իշխանությունը պակասեցնում ե հարկերը։ Մեծ ոգուտ ե տալիս գյուղացուն նաև գյուղատնտեսական վարկը։ Զնայած այն հանգամանքին, վոր Խորհրդային իշխանությունը մեծ կարիք ունի փողի, չքավոր և միջակ գյուղացիությանը բաց ե թողնում մեծ գումարի վարկ։ Անցյալ տարվա ընթացքում Խորհրդային պետությունը գյուղացիությանը բաց թողեց 120 միլիոն ռ. վարկ. 1926 թվին դրանից շատ ավելի գումարներ բաց թողնվեցին։ Բայց չե՞ վոր միայն պետության ոգնությունը քիչ ե։ Դրա համար ել պետք ե, վոր գյուղացին ինքը մասնակցի գյուղատնտեսական վարկի զարգացման գործին։ Հարկավոր ե, վոր գյուղացին իր ավելորդ գումարները պահ կերպ կանոնավորել և լայնացնել։

Հարկավոր ե այդ ընկերությունների աշխատանքը պահեն կերպ կանոնավորել և լայնացնել։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. ԻՆՉՈւ համար հողաշխարարությունը անհրաժեշտ եւ

Ինչո՞ւ հողային արտելները, ընկերությունները, կոմունաները ավելի լավ են, քան անջատ, մանր տնտեսությունները։

Գյուղատնտեսության համար ի՞նչ նշանակություն ունեն մեքենաները, մանավանդ տրակտորը։

Ի՞նչպիս ե Խորհրդային իշխանությունը ոգնում աղքատ գյուղացուն՝ գյուղական տնտեսությունը լավացնելու։

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ Հայաստանում հաստատվեց Խորհրդային իշխանություն, մեր գյուղացիությունը շատ ծանր վիճակում եր, վորովհետև անընդհատ կոխվերից, թե դրանք գուրգների հետ և թե մանավանդ ներսում, նրա տնտեսությունը քայլացվել եր, իսկ ինքը հասել եր ծայր չքավորության։ Յեթե մենք համեմատենք մեր գյուղացիության դրությունը վեց տարի առաջ և հիմա, կտեսնենք վոր տարբերությունը իսկապես վոր շատ մեծ ե։ Մեր գյուղատնտեսությունը այս վեց տարվա ընթացքում այնքան ե առաջ գնացել, վոր ներկայումս մենք գտնվում ենք այն դրության մեջ, ինչ վոր պատերազմից առաջ եր։ Սրանից հետո, խոսք չկա, մեր յերկիրն ավելի պիտի առաջ գնա, քանի վոր Խորհրդային իշխանությունը վոչ մի ջանք չի ինայում մեր գյուղացիների տնտեսական դրությունը բարելավելու համար։ Ներքեւ բերած թվերից յերկում ե, թե ինչքան ե առաջ գնացել մեր գյուղատնտեսությունը այս վեց տարվա ընթացքում։

Գլխավոր ցանկների տարածությունը.

պատերազմից առաջ. 1919 թվին. 1926 թվին.

|               |             |          |             |
|---------------|-------------|----------|-------------|
| 1) Բամբակ     | 10.736 դես. | 584 դես. | 14.700 դես. |
| 2) Կտավատ     | 4.614 »     | 858 »    | 4.500 »     |
| 3) Կարտոֆիլ   | 6.392 »     | 1.690 »  | 10.300 »    |
| 4) Ցանովի խոտ | 4.000 »     | 175 »    | 3.040 »     |

|             |         |   |        |   |         |   |
|-------------|---------|---|--------|---|---------|---|
| 5) Ցորեն    | 163.000 | » | 46.000 | » | 133.200 | » |
| 6) Գարի     | 96.000  | » | 20.000 | » | 66.600  | » |
| 7) Զալթռուկ | 1.750   | » | 515    | » | 525     | » |

Այս թվերից յերկում ե, վոր մեր բոլոր տեսակի ցանքսերը վեց տարվա ընթացքում մոտեցել են պատերազմից առաջ յեղած դրության, իսկ մի յերկուար, ինչպես՝ որինակ, բամբակն ու կարտոֆիլը մինչև անդամ ավելացել են, և բավական մեծ չափերով։

Հիմա տեսնենք, թե անասունների թիմն ինչ չափով ե աճել Հայաստանում։

|                      | Պատերազմից առաջ. | 1919 թվին.  | 1926 թվին.  |
|----------------------|------------------|-------------|-------------|
| 1) Խոշոր անասուններ՝ | 683.500 գլ.      | 229.500 գլ. | 643.546 գլ. |
| 2) Վոչխարներ         | 1.378.000 »      | 405.700 »   | 967.000 »   |
| 3) Այծեր             | 186.000 »        | 65.000 »    | 193.500 »   |
| 4) Խողեր             | 23.600 »         | 5.600 »     | 34.000 »    |
| 5) Զիբեր             | 51.400 »         | 19.800 »    | 27.100 »    |

Այստեղից պարզ յերկում ե, վոր մենք ներկայումս անասուններ ունենք համարյա նույնքան, ինչքան պատերազմից առաջ եր։ Ահա՝ թե ինչքան արագ ե վերականգնում մեր գյուղատնտեսությունը։

#### ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴԱԾԱԾՔ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Գավգործկոմում կամ գյուղխորհրդում տեղեկացեր, թե արդյոք ձեզ մոտ շատացե՞լ ե հողերի քանակը հեղափոխության ընթացքում։ Ստուգեցեր, թե արդյոք գյուղացիք սկսում են լավացնել իրենց տնտեսությունը—հողամշակության ձեերը, ցանում են խոտեր, տեխնիկական բույներ։

Եթե ձեզ մոտ չկա գյուղատնտեսական խմբակ, — կազմակերպեցե՞ք, այդպիսի խմբակը կոնսի՝ տնտեսությունը լավ հիմքերի վրա դնելու։ Ծրագիրը կարող եք ստունալ քաղլուսվարից։ Իսկ այնտեղ, ուր կա գյուղատնտեսական խմբակ, տեղեկացեր, թե ինչ ե նա անում՝ գյուղական տնտեսության վիճակը բարվութելու համար։ Ի՞նչպես են աշխատում խմբակի անդամ - կոմյերիտականները իրենց տնտեսության մեջ։

Գրույց չորրորդ

#### ԿՈՒԼԱԿԻ, ՄԻԶԱԿԻ ՑԵՎ ԶՔԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ.

ՊԵՏՔ Ե ՍՈՎՈՐԵԼ ՀԱՍԿԱՆԱԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐ ՐՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ ԴԵՐՈՒՅՈՒՄ։

Գյուղացիությունը գյուղում ըստ իր տնտեսական գիրքի յերեք միատարր չե յեղել։ Այժմ ել նա բաժանվում ե զանազան, իրարից տարբեր խավերի՝ չքավորների, միջակների և կուլակների։ Գյուղացիության այս շերտավորումը հայտնի յե ամենքին, բայց ամենքին ձեռնուու չե այդ շերտավորման մասին բացարձակ խոստովանվել։ Բուրժուազիան իր ամբողջ ուժով ջանում եր և ջանում ե աշխատավորներին հեռու պահել այն հասկացողությունից, թե գյուղում բոլորը հավասար չեն, աշխատում ե դրությունն այնպես ներկայացնել, վոր իրը թե վողջ գյուղացիությունը միատարր ե, նրա շահերը միատեսակ են։ Կոմունիստական կուսակցությունն ու քանվորա-գյուղացիական իշխանությունը, ընդհակառակը, միշտ ձգտում են գյուղի զանազան խավերի մեջ յեղած տարբերությունը պարզապես ցույց տալու։ Ընկեր լենինը «Գյուղացու տված հարցին պատասխան» հոդվածում (1919 թ.) գրել ե՝ «Զիա Խորհրդային իշխանու-

թյան վոչ մի դեկրետ և վոչ մի վորոշում, վորտեղ նկատի չառնվեյին յերեք գլխավոր խավերի տարբերությունը։ Դա ոգնում ե բանվոր դասակարգին՝ գյուղում տեսնելու իր բարեկամներին և թշնամիներին, աջակցելու առաջիններին և հաղթելու մյուսներին։ Յեվ իսկապես, բատրակները, — դրանք նույնպես բանվորներ են, միայն՝ գյուղական տնտեսության մեջ, չքափորությունը նույնպես բանվորության հետ միասին ձգտում ե լավ վիճակի, դիտե, վոր անցյալ կարգերի վերականգման մեջ փրկություն չի գտնի։ Այլ են կուլակները, Նրանք, ընդհակառակը, մինչև հեղափոխությունը համերաշխ ապրում եյին կալվածատերերի, վաճառականների և գործարանատերերի հետ։ Սրանց հետ միասին կուլակները մի ժամանակ թալանել են չքափորներին, սրանց հետ միասին հիմա նրանք ատում են Խորհրդային իշխանությունը։ Գյուղացիության զանազան շերտերը, ըստ իրենց շահերի, պատկանում են հասարակության զանազան դասակարգերին — վոմանք բուրժուազիային, վոմանք ել բանվոր դասակարգին։ ահա թե ինչու «շերտավորումը գյուղում» խոսքերին կոմունիստական կուսակցությունը ավելացնում ե ևս մի խոսք — «դասակարգային»։ Տեսնել դասակարգային շերտավորումը գյուղում և կարողանալ այդ շերտավորումը հասկանալ, շատ կարենո՞ւ ե։ Նա, ով այդ հարցում վոչինչ չի հասկանում, նա չի կարող հասկանալ կուսակցության՝ գյուղում աշխատանք տանելու մասին արած վորոշումները, չի կարող իրականացնել այդ վորոշումները։ Ի՞նչ հատկանիշների հիման վրա կարելի յե անվանել մեկին կուլակ, մյուսին՝ միջակ գյուղացի, յերրորդին՝ չքափոր։

Սկսենք կուլակից։ Ում կարելի յե կուլակ անունը տալ։ Կարելի՞ յե, որինակ՝ ըստ ցանքսի չափերի, կամ ըստ ունեցած տավարի, լծկանների քանակի, կամ, որինակ

լավ տուն (շենք) ունեցող գյուղացուն կուլակ անունը տալ։ Վո՞չ, չի կարելի։ Գուցե կարելի յե, ինչպես ընկեր լենինն եր կատակում, հնարել մի այնպիսի աստիճանաչափ (ինչպես հիվանդանոցումն ե), վորը դնեյինք թեկի տակը, այստեղ պահեյինք մի տասը ըռպե և հանեյինք, — ահա և կարելի կլիներ տեսնել՝ կուլակ ե թե վոչ։ Բայց այդպիսի աստիճանաչափ վոչ վոք չե գտել և չի գտնում։ Յեվ այդ պատճառով ել մեր յերիտասարդությունը ստիպված ե յերկար ու համառ կերպով ուսումնասիրել գյուղացու տընտեսությունը, ուսումնասիրել նրա զարգացման շարժիչ ուժերը, ուսումնասիրել նրա տնտեսության արդյունքները, առանձնապես ուսումնասիրել հողի կապակի դերը այս կամ այն դեպքում, վարձու աշխատանքի դերը և այլն։ Ոգտակար ե հետազոտել և հարուստ տնտեսությունների պատմությունը։ Անհրաժեշտ ե միենույն ժամանակաշրի առաջ ունենալ, վոր կուլակին ճանաչելու համար վոչ թե պիտի վերցնել մի վորեւ հատկանիշ, որինակ՝ շատ ցանքս և շատ վարելահող ունենալը, այլ պետք ե վերցնել մի շարք այնպիսի հատկանիշներ, վորոնք ցույց տային, վոր ավյալ տընտեսության արդյունքի հիմնական աղբյուրն ե հանդիսանում (այս կամ այն ձևով) ուրիշի աշխատանքի շահագործումը։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Բնակչության ի՞նչպիսի խավեր կան գյուղում։  
 Ի՞նչո՞ւ գյուղի շերտավորումը կոչվում ե դասակարգ այլին։  
 Ի՞նչն ե հանդիսանում կուլակի տնտեսության գլխավոր հատկանիշը։

ՈՒՄ ՀԱՄԱՐԵԼ ԿՈՒԾԱԿ, ՄԻԶԱԿ ՅԵՎ ԶԲԱՎՈՐ。

Կուլակային տնտեսություն պետք ե համարել այնպիսի տնտեսությունը, վորը նախ շարունակ (և վոչ թե մերժ ընդ մերթ) գործադրում ե վարձու աշխատանք։

յերկրորդ՝ շատ հող ե կապալով վերցնում, այս հաշվով,  
վոր այդ հողը մշակե վարձու բատրակների աշխատանքով.  
յերրորդ՝ ունի բավականաչափ թվով տավար (լծկան) և  
գյուղատնտեսական գործիքներ, դարձյալ այն մտադրու-  
թյամբ, վոր այդ բոլորը կապալով վերցրած հողի վրա  
ոգտագործե բատրակների ոգնությամբ. չորրորդ՝ առևտրա-  
կան կամ արդյունաբերական ձեռնարկություններից յեկա-  
մուտ ունի. հինգերորդ՝ այս շահագործումից (վարձու աշ-  
խատանք, կապալ) ստացված փողը նորից գործադրում  
ե իր գործը մեծացնելու վրա, այսինքն, նոր բատրակներ ե  
վարձում, նոր հողեր ե կապալով վերցնում և այն: Ահա  
այսպիսի տնտեսությունը, վորը թե դեսյատինների և թե  
տավարի ու ինվենտարի քանակությամբ հարմարեցված ե  
աշխատավոր ուժ վարձելու և այդ գործադրելու համար,—  
այսպիսի տնտեսությունը կուլակային ե, շահագործող:

Սնհրաժեշտ չե, վոր բոլոր այս հատկանիշները լինեն՝  
տնտեսությունը կուլակային տնտեսության շարքը դասելու  
համար: Կարող յե և այնպես պատահել, վոր, որինակ,  
տնտեսության տերը աշխատավոր ուժը շահագործում ե վոչ  
թե բատրակներ վարձելով, այլ ինվենտարը չքավորին  
կապալով տալու միջոցով, կամ լծկան և սերմնացու տալով  
չքավորին ճորտական պայմաններով: Այժմ դառնանք գյուղ-  
ացիության ներհակ խավին՝ չքավորությանը:

Ի՞նչ ե ներկայացնում չքավորական տնտեսությունը:

Չքավոր տնտեսությունները այնպիսիք են, վորոնք՝  
1) գյուղատնտեսական ինվենտար կամ բոլորովին չունեն  
և կամ շատ չնշին քանակությամբ ունեն. գրանք սովո-  
րաբար լծկան չունեցող գյուղացիք են, վորոնք իրենց  
հողը մշակում են հարուստ հարեանի ճորտային կամ  
կիսաճորտային պայմաններով տված լծկանի և ինվեն-  
տարի ոգնությամբ. 2) չքավոր տնտեսությունների գյու-  
ղատնտեսական արդյունքը չի բավարարում իր ընտանիքի

պահանջները. 3) չքավոր ընտանիքը իր հիմնական յեկա-  
մուտը ստանում ե վոչ թե իր տնտեսությունից, այլ իր աշ-  
խատավոր ուժի վաճառումից, ուրիշների տնտեսություն-  
ներում գյուղատնտեսական վորեւ սև աշխատանք կատա-  
ելով և դրա դիմաց չնշին աշխատավարձ ստանալով (ընկ-  
նեւմ ե բատրակների շարքը, բատրականում ե):

Մեր Խորհրդային Միության մի քանի շրջաններում  
կողմանակի արհեստաներից ստացած արդյունքը ավելի շատ ե,  
քան գյուղական տնտեսությունից ստացած յեկամուտ-  
ները, յերբ տնտեսատերը հաց ավելի շատ ե գնում, քան  
թե ծախում ե:

Մրանք են չքավոր տնտեսության հիմնական հատկա-  
նիշները:

Ինչպես կուլակին վորոշելիս, այնպես ել այս գեպ-  
քում անհրաժեշտ չե, վոր՝ այս կամ այն տնտեսությունը  
չքավոր համարելու համար՝ լինեն բոլոր թված հիմնական  
հատկանիշները: Բոլոր վայրերի համար մի ոտույգ չափա-  
նից, ինչպես ասում եր ընկ. Լենինը, լինել չի կարող:  
Սակայն մենք բացարձակապես պիտի ասենք, վոր չքավոր  
տնտեսությունները—մեծ մասամբ կապալով, վարձով և  
այլ կերպ շահագործվող տնտեսություններն են: Իսկ կու-  
լակային անտեսությունները—մեծ մասամբ հարուստ և  
կապալով, վարձով կամ այլ կերպ՝ չքավորությունը շահա-  
գործող տնտեսություններն են:

Այս յերկու խմբակցությունների միջին տեղը գրա-  
վում են միջակ տնտեսությունները: Միջակ գյուղացիու-  
թյունը—գյուղացիության ամենաբազմաթիվ խան ե, և  
սրա հիմնական մասսան վոչ շահագործում ե և վոչ շահա-  
գործվում: «Միջակ գյուղացին հարուստի և ընչազուրկի  
(պրոլետարի) մեջտեղն ե բոռում, այդ պատճառով ել նա  
կոչվում ե միջակ: Նա միջակ ել ապրում ե. յեթե տարին  
աջող ե, նա իր տնտեսությամբ հոգում ե իր գործը, սա-

կայն նա միշտ կարիքի սպառնալիքի տակ ե գտնվում:  
Խնայողություններ նա կամ բոլորովին չունի և կամ շատ  
քիչ ունի: Այդ պատճառով նրա տնտեսությունը խախուտ  
ե»: (Լենին):

Միջակ գյուղացիության խավը միատարր չե:

Միջակների վորոշ մասի տնտեսությունը «խախուտ  
ե, և միշտ կարիքի սպառնալիքի տակ»՝ յերբ յերաշտ ե  
լինում, յերբ լծկանն ե ընկնում, կարկուտն ե խփում,  
մի խոսքով՝ յերբ տնտեսության մեջ ձախորդություն ե  
պատահում: Այդպիսի միջակ գյուղացին մեծ մասամբ  
աղքատանում ե և հարուստ հարևանի ստրուկը, ճորտը  
դառնում:

Միջակ գյուղացիների այս մասն ըստ իր կարողու-  
թյան շատ մոտ ե չքափորներին: Միջակների մեջ կան և  
այնպիսիները, վորոնք ըստ իրենց կարողության մոտենում  
են կուլակներին: Իլիչն ասում եր, վոր կան այնպիսի ունեոր  
միջակներ, վորոնցից առաջ կդան կուլակներ: Սրանք իրենց  
ուժեղ տնտեսություններից ստանում են այնպիսի ար-  
դյունք, վոր հաջող տարիներում կարող կլինեն գործա-  
դրել՝ անաշխատ յեկամուտներ ունենալու համար: Հայտնի  
յե, վոր կուլակները յերկնքից չեն իջնում, այլ առաջ են  
գալիս և առաջ կդան ունեոր միջակներից, բայց և այն-  
պէս ունեոր, շատ ցանքս անող գյուղացին կուլակ չե: Այդ  
յերբեք չպետք ե մոռանալ: Միջակների, թեկուզ և ունե-  
վոր միջակների տնտեսությունների զարգացման առաջ  
վոչ միայն չպետք ե խոչընդոտներ հարուցել, այլ այդ զար-  
գացման ինդրում ամեն կերպ պետք ե աջակցել ջանասեր  
տնտեսատերերին. դրանց մասնակի չափով թույլ ե ար-  
վում նաև կապարով վերցնել և աշխատող ձեռքեր վարձել,  
միայն թե նրանք անցնելին տնտեսավարության կուլտու-  
րական միջոցների, իրենց յեկամուտները կոռպերացիա  
մուծելին:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչ ե նշանակում  
շահագործում խոսքը:

Ի՞նչպես կարող ե կուլակը շահագործել չքափորությանը:  
Վորակիսի՝ տնտեսությունները պետք ե համարել չքա-  
գորական:

Ի՞նչո՞ւ յե միջակ գյուղացին տատանվում կուլակի և  
չքափորության միջև:

#### ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ.

Եերբ կոմունիստական կուսակցությունը և Խորհր-  
դային իշխանությունը հայտարարեցին նոր տնտեսական  
քաղաքականությունը, թույլատրեցին հացի և գյուղատն-  
տեսական այլ մթերքների առևտուր, նրանք գիտեյին,  
վոր գրանից կուլակները և չքափորները անխուսափելի-  
որեն ավելի ու ավելի կզոկնվեն, քան հեղափոխության  
առաջին տարիները, այսինքն՝ նրանք գիտեյին, վոր կու-  
ժեղանագյուղի շերտավորումը: Յ' վ գյուղի շերտավորումը  
կատարվում ե: Այս լավ գիտե գյուղում յուրաքանչյուր  
ապրողը, ժամանակակից գյուղի կյանքը ուսումնասիրողը:  
Բայց բավական չե ասել, վոր շերտավորումը կատարվում  
ե, բավական չե ասել, վոր կուլակն աճում ե, ուժեղա-  
նում. պետք ե նաև ուշադրությամբ ուսումնասիրել այդ  
աճումը, պետք ե փորձեր անել վորոշելու, արդյոք նա շատ  
ե աճում, որինակ, համեմատած նախապատերազմյան  
շրջանի աճման աստիճանի հետ:

Մենք արդեն այնպիսի վիճակի յենք հասել, վոր  
չենք բավականանում շերտավորման վաստով: Պետք ե  
գիտենալ, թե ի՞նչ պայմաններում և ի՞նչ կերպ ե կատար-  
վում այդ աճումը, ի՞նչն ե ուժեղացնում և ի՞նչն ե թու-  
լացնում այդ աճումը:

Գյուղի շերտավորման հարցը քննելիս, չպետք ե մո-  
ռանալ շերտավորման այն հատուկ, անցյալ ժամանակվա-

աճումն և ուժեղացումն անխուսափելի յեն, վոր կուլակները թեև դանդաղ, թեև դեռ քիչ, բայց աճել են և դեռ աճում են: Կուսակցությունը անցյալից գիտե, վոր վորմե յերկու կուլակային տնտեսությունների տնտեսական ուժը յերբեմն գերազանցում ե տասնյակ չքավորների և միջակ տնտեսությունների ուժը: Այս բոլորը թե՛ կուսակցությունը և թե՛ Խորհրդային իշխանությունը գիտեն և չեն փակում գյուղացիական կուտակումների ուղին, վորովհետեւ այդ կուտակումները տարեց-տարի ավելի հեշտ ե լինում ուղղել այնտեղ, ուր հարկն ե: Կուտակումների թույլտվությունը առանձին գյուղացիական տնտեսությունների համար՝ բնավ չի նշանակում, վոր գյուղական բուրժուազիայի դեմ դասակարգային պայքարը դադարեցված ե: Այդ բոլորովին չի նշանակում, վոր կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը հրաժարվում են չքավորներին ու միջակներին պաշտպանել շահագործող խավերից: Միայն փոխվում ե գյուղական կուլակների դեմ պայքարելու ձեր: Արդեն հինգ տարի յե անցել այն ժամանակից, յերբ Խորհրդային իշխանությունը բացարձակ կովում տապալեց կալվածատերերին ու կապիտալիստներին և ձեռք առավ պայքարելու այնպիսի յեղանակներ, վորոնց կիրառմամբ կուլակային տնտեսությունները խորհրդային լավ տնտեսությունների, կոլեկտիվ լավ տընտեսությունների, լավ կոոպերատիվների կազմակերպման միջոցով արտաքսվում են: Այդ պայքարում գյուղական չքավորությանը պաշտպանում են Խորհրդային իշխանության բոլոր ձեռք առած միջոցները, իսկ գյուղական բուրժուազիան ձգտում ե դեպի հին ձերը, ձգտում ե պահպանել առաջվա կարգերը:

Բոլորվին այլ ե միջակ գյուղացիության դրությունը: «Ամենուրեք, վորտեղ սկսվում ե պայքարը հարուստների և չքավորների միջև, սեփականատերի և բանվոր-

ների միջև, միջակ գյուղացին մնում ե մեջտեղը, և չգիտեուր գնա: Հարուստները իրենց կողմն են քաշում՝ չե՞ վոր դու տնտեսության տեր ես, սեփականատեր ես, դու վոչ մի անելիք չունես մերկ բանվորների հետ: Իսկ բանվորները ասում են՝ հարուստները քեզ կխարեն, քեզ կթալանեն, քեզ այլ վրկություն չկա, բացի այն, վոր դու մեզ ոգնես ամեն տեսակի հարուստների դեմ մղվող մեր պայքարում:

Միջակ գյուղացու շուրջը այս վեճը կա բոլոր յերկներում»: (Լենին, «Գյուղական չքավորություն», հասոր 9, յերես 340):

Այս ժամանակվանից, յերբ Լենինը գրել ե այս խոսքերը, անցել ե յերկու և կես տասնյակ տարի:

Յեկ ահա հիմա, յերբ մենք հինգ տարի արդեն խաղաղ հանգամանքներում տնտեսական աշխատանք ենք տանում ու մեր ամբողջ կյանքը վերաշինում նոր հիմքերի վրա, մեզ համար դեռ առաջնագույն և վճռողական նշանակություն ունի «միջակ գյուղացու» շուրջը յեղած վեճը, չքավորին միջակի հետ զոդելու (սմըչկա) պայքարը, միջակին կուլակից ազատագրելու պայքարը:

Կուլակը իր վողջ ուժով աշխատում ե իր կողմը քաշել միջակ գյուղացուն: Վորոշ դեպքերում այդ հաջողվում ե, յենթադրենք թե բանվոր դասակարգն ու քաղաքային արդյունաբերությունը միջակ գյուղացուն չկարողացան տալ եժան գներով բավականաչափ ապրանք և այդ ապրանքը տալիս ե մասնավոր վաճառականը. յենթադրենք թե միջակ գյուղացին գերադասում ե վարկը կոոպերացիայից չստանալ, այլ կուլակից, և յենթադրենք թե միջակին այդ ավելի շահավետ ե. ի՞նչ կստացվի: Կստացվի զոդումն մասնավոր կապիտալի և գյուղացիության հիմնական մասսայի. կուլակը կկանգնի գյուղացիական մասսայի և բանվոր դասակարգի միջև նրա համար, վորպեսզի նրանց միջև յեղած միու-

թյունը խախտի, գյուղացիներին պրոլետարիատի ղեկավարությունից զրկի և բուրժուազիայի կողմը քաշի:

Ահա թե վոր կողմից ե սպասվում կուլակային վըտանդը:

Յե՛կ յերիտմիության, և՝ կուսակցության մեջ կան մարդիկ, վորոնք մտածում են այսպես.—չի խանդարում կուլակին հիշեցնել ռազմական կոմունիզմի, չքավորության կոմիտեների որերը և կուլակներին մի լավ ցնցել, թե չե նրանք չափից դուրս և անարդել աճում են ու այդ աճումից վոչ չքավորությունը և վոչ ել Խորհրդային իշխանությունը շուտով դադար չեն ունենա:

Պարզ ե, վոր այդ մարդիկ չեն հասկանում թե ինչումն ե կայանում կուլակային վտանգը, չեն հասկանում թե ի՞նչպես պետք ե կովել կուլակների բռնության դեմ: Կուլակի վրա արգելք դնել չի կարելի: Նրան կարելի յե և պետք ե հաղթել տնտեսական մրցության միջոցներով:

Հիմա մեր գլխավոր գործը վոչ թե կուլակի դեմ բացարձակ կովելն ե, գյուղում դասակարգային պայքարը բորբոքելը, այլ միջակներին և չքավորներին բանվոր դասակարգի շուրջը համախմբելը:

Այժմ մեր գլխավոր գործն ե՝ գյուղացիության հիմնական մասսային ցույց տալ Խորհրդային իշխանության առավելությունները, բարձրացնել այդ մասսայի կարողությունը, կուլտուրական մակերեսույթը և նրա հետ միասին, պլրութարիատի ղեկավարությամբ, առաջ շարժվել:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը ուշադրություն են դարձնում միջակ գյուղացու վրա:

Ինչո՞ւ յե անհրաժեշտ չքավորության ու միջակ գյուղացիության մերձեցումը:

Ի՞նչ կերպ ե այժմ Խորհրդային իշխանությունը պայքարում կուլակի դեմ:

ՊԵՏՔ Ե ՈԴՆԵԼ ԶԲԱԳՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ ՅԵՎ ՍՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՊԵԼ, ԿՈՒՆԱԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄՄԱՐ.

Ահա հատկապես սրա համար կարեոր ե համախմբել չքավորությունը, ոգնել նրան կարիքից ազատվելու: Գյուղական չքավորությունը կազմակերպվում ե գյուղական խորհուրդների շուրջը առանձին խմբերով և կուսակցության ղեկավարության տակ ձգտում ե բարելավել գյուղական անտեսությունը, ձգտում ե բարելավել գյուղական խորհրդի աշխատանքը:

Չքավորության ժողովներում, միջակ գյուղացիների հետ միասին, վորոշում են, թե ո՞ւմ ընտրեն խորհրդի անդամ, կոոպերատիվի վարչության և կամ փոխադարձ ոգնության կոմիտեյի անդամ. միջակ գյուղացիների հետ միասին, ընտրությունների ժամանակ, չքավոր գյուղացիները պաշտպանում են իրենց թեկնածուներին կուլակների և կուլակների թեկնածուների դեմ:

Խորհրդային իշխանությունը, չնայած անտեսական գժվարություններին, վոչ միայն չի կրատում այն արտոնությունները, վոր առաջ տալիս եր չքավորության, այլ նույնիսկ ավելացնում ե: 1924—25 թ. հողաշինարարության համար տրված ե 1.840.000 ռ., իսկ 1925—26 թ. տրվում ե 3 ու կես միլիոնից ավել: Այս գումարի մեջ չեն մտցված այն գումարները, վոր արված են կենտրոնական սեհող շրջանին, վորը սովոր տուժել ե ավելի շատ, քան այլ շրջանները:

Բացի այդ, ֆողովրդական կոմիսարների Խորհուրդը բաց ե թողել 20 միլիոն ռ. գյուղացիական չքավորությանը յերկարատե և արտոնյալ վարկ տալու համար:

Չքավոր գյուղացուն ահագին ոգուտ են բերելու նաև միասնական գյուղատնտեսական հարկին վերաբերյալ արտոնությունները:

Մեր հարկերն ըստ յեկամուտների յեն նշանակվում։ Սա նշանակում է, զոր վորքան ավելի հարուստ ե գյուղացին, այնքան ավելի հարկ ե վճարում։ Անցյալ տարի ամենանվազ տնտեսությունները (բաց առյալ հարկից ազատված 5 միլիոն տնտեսությունները) վճարում եյին իրենց ունեցած յեկամտի 4%, իսկ ամենահաջուստ տնտեսությունները—իրենց յեկամտի 12%։ Իսկ այս տարի ամենանվազ (դարձյալ բաց առյալ հարկից բոլորովին ազատված 5 միլիոն տնտեսությունները) տնտեսությունները պետք է վճարեն իրենց արդյունքի միմիայն 2%, իսկ ամենահարուստ տնտեսությունները՝ իրենց արդյունքի 20 տոկոսը։

Բացի այդ՝ Խորհրդային իշխանությունը տալիս ե միշտարք այլ արտօնություններ, որինակ՝ անտառների, պետական ապահովագրման վերաբերյալ և այն։

Խորհրդային իշխանությունը զատում ե չքավորներին և բատրակներին, նրանց ամեն տեսակի արտօնություններ ե տալիս։ Սակայն բանից դուրս ե գալիս, զոր որենքները յերբեմն չեն իրավործվում, չքավորությունը այդ արտօնություններից չի ոգտվում։ Կուսակցության XIII Համագումարը գեռ այն ժամանակ նիշել ե, զոր չքավորագույն խավերի շահերը պաշտպանող շատ որենքներ, շնորհիվ խորհրդային ապարատի թերությունների, շնորհիվ գյուղի չքավորների հետամնացության, տեղում չեն գործադրվում։

Մեր կուսակցության առաջնորդներից մեկը, ընկեր Ստալինը, այսպիսի հրահանգ ե տալիս Յերիտմիության։—

«Գյուղում՝ Յերիտմիության ակտիվը հեղափոխական որինական ուժության պահակ պիտի լինի։ Նա պիտի գյուղի չքավորության պաշտամություն լինի։»

Չքավորից չքավորը գյուղում նա յե, ով ստիպված է բատրակ գառնալու։ Մենք գիտենք արդեն, զոր կուտակա-

յին անտեսության արդյունքները ստացվում են վարձու բանվորների աշխատանքի շահագործումից։ Ինց դրա համար Խորհրդային իշխանությունը ձգտում է պաշտպանել բատրակին, պաշտպանել նրա աշխատանքը։ Դրա համար ել բատրակներն ունեն իրենց արհեստակցական «Հողանտառ» աշխատավորների կամ գյուղատնտեսական և անտառային գործով գբաղվող աշխատավորների միությունը։

Այդ միությունը իր գլխավոր ուշադրությունը դարձնում է ամենահետամնաց, խավար, մեր յերկրի անպարփակ տարածության վրա ցրկած բատրակներին, գյուղատնտեսության վարձու աշխատավորներին, հովիժներին և այլն կազմակերպելու խնդրի վրա։

Գյուղական բնակչության այս մասը հանդիսանում է բանվոր դասակարգին ամենամոտիկ տարրը։ Բատրակները հանդիսանում են կուսակցության և Խորհրդային իշխանության ամենավատարիմ նեցուկը գյուղում։ Միությունը ձգտում է գյուղատնտեսական և անտառային գործով պարապող աշխատավորներին գյուղի ամենաառաջադեմ խավը դարձնել։ Դրա համար պետք է գյուղատնտեսական բանվորների կուլտուրական մակերևույթը բարձրացնել, բարձրացնել նրանց գիտակցությունը, վորպեսզի նրանք կարողանան հասկանալ բանվոր դասակարգի (զորի մասն են կազմում իրենք) ընդհանուր անելիքները։ Գյուղատնտեսական բանվորներից շատերը նյութական շատ ծանր գրության մեջ են։ Լույսից մինչև լույս բանվորական որ, ցածր աշխատավարձ և այն։ Բատրակը կամ բատրակուհին յերբեմն աշխատում են միայն փոք հացի։ Միությունը ձգտում է բատրակի համար աշխատանքի լավագույն պայմաններ ստեղծել, պաշտպանում է նրա քաղաքացիական իրավունքները։

Վորպեսզի ավելի լավ պաշտպանի բատրակի աշխատանքը,

արհեստակցական միությունը ձգտում է աշխատավորական պայմանագիր կնքել վարձողի և բատրակի միջև:

Պայմանագրի մեջ հիշված պիտի լինեն այն հիմնական աշխատանքները, վորոնց կատարելու համար վարձվում է բատրակը, —ժամանակամիջոցը, աշխատանքի ժամերը, աշխատավարձի վճարման տեսակներն ու ժամկետները և այլ լրացուցիչ պայմանները: Դործատերը իրավունք չունի տվյալ վայրի համար հաստատված աշխատավարձի վորոշ չափից պակաս տալու:

Միությունը հետևում է աշխատավարձի վճարման և աշխատավարձի պաշտպանության վերաբերյալ յեղած որենքների կատարմանը, հիմնում է զյուղատնտեսական և անտառային գործով պարագող աշխատավորների համար փոխադարձ ողնության գանձարկներ, ողնություն և հասցնում միության անդորք անդամներին: Միությունը կամ ինքն է մշակում և կամ մասնակցություն է ունենում այնպիսի որենքների մշակման գործում, վորոնք վերաբերում են բատրակների դրությունը բարելավելուն և նրանց շահերը պաշտպանելուն, և այնուհետև այդ որենքները անց է կացնում խորհրդային որդաններով:

Խորհրդային իշխանությունը որենքի միջոցով պաշտպանում է բատրակին կուլակի ճորտը դառնալուց:

Գյուղացիք և բատրակները այդ լավ են ըմբռնում և քանի գնում, այնքան ավելի շատ են դիմում միությանը՝ աշխատավարձուն ստանալու և աշխատավորական պայմանագրեր կնքելու համար: ԽՍՀՄ զյուղատնտեսական և անտառային գործով պարագող աշխատավորների արհեստական միության («Հողանտառմիության») միջոցով աշխատավորական պայմանագրեր կնքող բատրակների և բատրակուների թիվը հետզիտե ավելանում է: 1924 թ. նրանց թիվը հասնում եր 350,000-ի, իսկ 1925 թ.—800,000:

Այսպես՝ քայլ առ քայլ աճում է չքավորության և բատրակների կազմակերպությունը: Այս կազմակերպվածությունը զլիսավոր ուժն է կազմում՝ կուլակների դեմ պայքարելու համար: Զքավորությունը փորքան ավելի բարձրացնի իր տնտեսությունը, վորքան ավելի ուժեղացնի իր մասնակցությունը խորհուրդների աշխատանքում, կոռուպերացիայում, այնքան ավելի գժվար կլինի նրան շահագործել: Մեր տնտեսության աճումը խորհրդային իշխանության որով անհնարին կդարձնի կուլակի գոյությունը, վերջնականապես կվոչնչացնի կուլակին:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԻՆՉՈ՞ւ համար անհրաժեշտ է, վոր զյուղխորհուրդներին կից չքավոր գյուղացիների խմբակներ լինեն:

Վո՞ր կազմակերպությունը պիտի դեկավարի այդ խըմբակների գործներությունը:

Խորհրդային իշխանությունը ինչո՞վ և ոգնում չքավորությանը:

Ո՞ւմ և պետք «Հողանտառմիությունը»:

Ի՞նչ դեպքում բոլորովին կանհետանա կուլակը:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴԱՑԱԾԼ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Տեղեկացե՛ք զյուղխորհուրդում կամ գավառամասային գործադիր կոմիտեյում, թե վորքան են ձեր զյուղում չքավորները, միջակները և կա՞ն արդյոք կուլակներ:

Մանոթացե՛ք «Հողանտառմիության» ձեր բաժանմունքի կատարած աշխատանքի հետ:

Հաշվեցե՛ք, թե վո՞րքան անդրագետներ կան բատրակների և չքավորության շրջանում. կապ հաստատեցեք գավառամասային խրճիթ-ընթերցարանի հետ և վերջինիս ոգնությամբ նրանց գրագիտություն սսվորեցրե՛ք:

Հետեւեցե՛ք, լավացե՞լ, թե վատացել է չքավոր ընտանիքների ապրուստը, պարզեցեք բարելավման ու վատացման պատճառները:

ԿՈՌԵՐԱՑԻԱՆ Խ.Ս Հ.Մ. ՄԵԶ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.

Ի՞՞Չ Ե ԿՈՌՊԵՐԱՑԻԱՆ,

Մենք արդեն դիտենք, վոր ԽՍՀ Միության մեջ իշխանության գլուխ ե կանգնած բանվոր դասակարգը, վորը ղեկավարում ե գյուղացիությանը: Մեզ հայտնի յենակ, վոր պղողետարական պետությանն են պատկանում գործարանները, հողը: Մեզ հայտնի յենույնպես, վոր գյուղական տնտեսությունը չի կարող յոլա գնալ առանց գործարանյին ապրանքների, ինչպես և գործարանները չեն կարող աշխատել, յեթե գյուղացին քաղաքին չտա հում նյութ, հաց և այլն. այդ ամենը մեզ հիմա լավ հայտնի յենախորդ գրուցներից: Այժմ հարկավոր ե իմանալ, թե ի՞նչ պետք ե անել, վորպեսզի գործարանների և հողի արդյունքները ավելի նպատականարմար կերպով բաշխվեն աշխատավորության մեջ: Ի՞նչ միջոցներ են պետք, վոր գործարանյին ապրանքները գյուղ հասնեն բավական քանակությամբ և ձեռնտու գներ ունենան, իսկ գյուղից քաղաքներին՝ հում նյութ, մթերքներ: Առաջ այդ գործը կատարողը, այսինքն՝ քաղաքի ապրանքը գյուղ, իսկ գյուղի մթերքը քաղաք տանող՝ բերողը չարչին եր, առետրա-

կանը: Ամեն առետրական միայն մի նպատակ ուներ— իր անձնական ոգուտը: Այժմ Խորհրդային իշխանության առաջ դրված ե այս խնդիրը—քաղաքի և գյուղի մեջ աղբանքների փոխանակությունը կազմակերպել այնպես, վոր դրանից ոգտվեն և բանվորները, և գյուղացիք: Այդ կարող ե անել կոռպերացիան: Կոռպերացիա խոսքը ֆրանսերեն կնշանակե աշխատակցություն: Առաջ Ռուսաստանում (ինչպես նաև այժմ կապիտալիստական յերկրներում) բանվորները, գյուղացիք և ծառայողները կազմում եյին կոռպերատիվ ընկերություններ՝ մասնավոր առետրականների հետ պայքարելու համար: Առետրականները ապրանքները ծախում եյին բարձր գներով, իսկ կոռպերատիվները իրենց նպատակ եյին դնում տալ իրենց անդամներին եժան գնով ապրանք: Բայց վորովհետև նախկին հասարակակարգի որով գործարանները և իշխանությունը գտնվում եյին կապիտալիստների ձեռքին, այդ պատճառով ել նրանք կամ խանգարում եյին կոռպերացիայի զարգացմանը կամ կոռպերացիան ոգտագործում եյին իրենց նպատակների համար:

Ի՞նչո՞ւ համար այժմ, Խորհրդային իշխանության որով, աշխատավորությունը կոռպերատիվներ ե հիմնում: Կոռպերատիվի գլխավոր նպատակը մեզ մոտ կայանում ե նրանում, վոր աշխատավոր մասսաները միացած ուժերով ավելի շատ և ավելի լավ տեսակի ապրանքներ ու մթերքներ պատրաստեն, վորպեսզի ճիշտ հաշվի առնեն, թե ի՞նչ ապրանքից վորտեղ վո՞րքան ե հարկավոր և վորպեսզի վերջնականապես դուրս վոնդեն մասնավոր առետրականին, ապրանք արտադրողի և ապրանք սպառողի միջև գոյություն ունեցող այդ միջնորդին: Շատ մեծ նշանակություն ունի կոռպերացիան մեր յերկրում, ուր քսանյերկում իլիոն գյուղացիական ծխեր ապրում և աշխատում են միմյանցից բաժան-բաժան:

Ինչպես ասել ենք նախկին զբույցներից մեկում—բավական չեղ վոր կապիտալիստներից և կալվածատերերից լուել ենք հողը, գործարանները, իշխանությունը։ Հարկավոր ե վողջ տնտեսությունը այնպես կազմակերպել, վոր աշխատավորության աշխատանքը ավելի լավ հիմքերի վրա դրված լինի։ Պարզ ե, վոր աշխատանքը լավ արդյունք ե տալիս, յեթե տնտեսության մեջ մեքենա ե գործածվում։ Իսկ մենք արդեն զիտենք, վոր գյուղական մանր տնտեսությունների մեջ անհնար ե թե լավ արդյունք ստանալ և թե մեքենա գործադրել այն չափով, ինչ չափով հնարավոր ե անել մեծ տնտեսությունների մեջ։ Այս բոլորը ցույց ե տալիս, վոր գյուղական մանր տնտեսությունները, վորտեղ աշխատանքի մեծ մասը կատարում ե մարդը, իրար պիտի միանան, կազմեն կոլլեկտիվ արնեսություն։ Պարզ ե, վոր այդպիսի տնտեսության մեջ կոլլեկտիվի յուրաքանչյուր անդամի աշխատանքը ավելի արդյունավետ ե, և այդտեղ կարելի կինի գործ դնել մեքենա։ Այդտեղ չեղ լինի վո՞չ տեր, վո՞չ ել բատրակ։

Կոռոպերացիան հսկայական ուժ կունենա միայն այն գեպօւմ, յերբ նրա նշանակությունը կգնահատեն մասսաները, յերբ բազմամիլիոն գյուղացիությունը կակտեակտիվ կերպով աշխատել, լավացնել և կատարելագործել կոռոպերացիան։ Դա դժվարին գործ ե։ Դրա համար հարկավոր են տարիներ։ Հարկավոր ե նախ և առաջ ժողովրդի մեջ տարածել գրագիտություն։ Այդ առթիվ մի քանի անդամընկ. Լենինը գրել է։ «Կոռոպերացիայի մասին» իր հոդվածում նա ասում է «Իսկապես մեզ միայն մի բան ե մնում անել—մեր ժողովուրդը դարձնել այնպես «կըթված», վորապեսզի նա հասկանա, թե ի՞նչ ոգուտ ե տալիս կոռոպերացիան։ յեթե նրան մասնակցում են բոլորը։ «Միայն» այդ։ Այժմ մենք ուրիշ վոչ մի իմաստության կարիք չունենք, վորապեսզի անցնենք սոցիալիզմին։ Բայց նրա համար, վորապեսզի

այդ «միայնը» գլուխ բերենք, հարկավոր ե մի ամբողջ հեղաշրջում, կուլտուրական զարգացման մի ամբողջ շերտ՝ ժողովրդական մասսաների կյանքում։ Ահա թե ինչու այդքան կարևոր ե, վորապեսզի ամեն մի գյուղացի գիտենա, թե ի՞նչ ե կոռպերացիան, ինչո՞ւ յե՞նա գյուղացուն կարևոր։

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ինչո՞ւ Խորհրդային պետության մեջ կոռպերացիան միացնում ե աշխատավորությանը։

Ինչո՞ւ կոռպերացիան միայն այն ժամանակ լավ կաշխատի, յերբ նրա աշխատանքներին կմասնակցեն ազգաբընակչության լայն խավերը։

Ինչո՞ւ անհրաժեշտ ե գրագետ լինել՝ կոռպերացիային ակտիվ մասնակցություն ցույց տալու համար։

Ի՞նչպես ե ԿՈՈՓԵՐԱՑԻԱՆ ՄԻԱՑՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Նախորդ զբույցներից մենք գիտենք, վոր ԽՍՀ Միության գյուղացիական տնտեսությունների 41,4%-ը աղքատ տնտեսություններն են կազմում։ Մենք գիտենք, վոր միջակ գյուղացու տնտեսությունն ես այնքան ամուր չե և հեշտությամբ կարող ե աղքատանալ՝ յերաշտի, տավարի համաճարակի դեպքում։ Այդ պատճառով ել հարկավոր ե այդ տնտեսությունները ամրացնել, նրանց ուժերը միացնել, կազմակերպել զանազան արտելներ, ընկերություններ։ Այդ նպատակն ունի գյուղատնտեսական վարկային կոռպերացիան, վոր հենվում ե նախ իր անդամների ինքնագործնեյության վրա։

Ի՞նչ ե անում նա, վորապեսզի չքավոր գյուղացու արնեսությունը բարձրացնի և միջակինը—ամրացնի։

Գյուղատնտեսական վարկային կոռպերացիան նախ աշխատում ե ոգնել չքավոր գյուղացոց կազմակերպելու, վորապեսզի սրանք միացած ուժերով իրենց տըն-

տեսությունը կարգի բերեն։ Այդ նպատակով նա առաջին հերթին արտելներին և կոլեկտիվներին ապառիկ բաց ե թողնում գյուղատնտեսական գործիքներ, սերմնացու և այլն։

Կոռպերացիան աշխատում ե առաջ բերել կոլեկտիվ աշխատանքի այնպիսի ձեւեր, վորոնք համարական և մատչելի յեն ամեն մի չքավոր և միջակ գյուղացուն։

Միացման այդպիսի ձեւեր են հանդիսանում հողի հանրային մշակումը, տավարի համար ուժեղ կեր (քուսպ և այլն) ընկերովի գնելը, գյուղատնտեսական մթերքների (պանիր և այլն) մշակումը արտելների միջոցով, միահամուռ ուժերով մեքենաներ գնելը և այլն։ Ամենագլխավորն այն է, վոր գյուղացիք հնարավորություն են ունենում գնել մեքենա, տրակտոր, յերբ նրանք միացած են լինում կոռպերատիվում։ Իսկ յերբ գյուղացոց արտերում սկսում ե աշխատել տրակտորը, մեքենան, այն ժամանակ գյուղացիք գործի մեջ տեսնում են, թե ի՞նչ մեծ նշանակություն ունի մեքենան և ի՞նչ ոգուաներ ե տալիս։ Դրանից հետո նրանք ավելի և ավելի են կապվում կոռպերատիվի հետ։ Ընկ Ռիկովը կուսակցության XIV կոնֆերանսին հետեւյալն ե ասել. «Մեքենան, տրակտորը—այժմ կարող ե գյուղում առաջ բերել մի ամբողջ հեղափոխություն այն խմաստով, վոր մեքենայի գործածության ժամանակ ձեռնոտու յե անցնել հողի հանրային մշակման։ Կոռպերատորներից մեկն ինձ պատմում եր, թե ի՞նչ ազգեցություն ունի տրակտորի մուտքը գյուղ։ Ահա թե ի՞նչ հարցեր են ծագում տրակտոր գնող արտելի առաջ։ Առաջին հարց վարել ամեն մի անդամի հողաբաժնը առանձին-առանձին, թողնելով հողաբաժնների մեջ անվար տեղեր (սահմաններ), թե բոլորը վարել միասին, վորպես ընդհանուր հողաբաժն։ Պարզ ե, վոր վերջինը ձեռնոտու յե։ Յերբ հողը վարած ե, ուրիշ հարց ե ծագում հողը այժմ բաժանել։ թե միասին ցանել և հետո բերքը բաժանել։ Յերբ արտը

հասնում ե՝ ծագում ե նոր հարց. չհնձա՞ծ բաժանել, թե՞ միասին հավաքել և հետո բաժանել խրձերը։ Յերբ հունձը միասին են հավաքած լինում, նորից հարց ե ծագում. խրձերը բաժանել, թե՞ միասին ծեծել։ Իսկ յերբ հացահատիկը պատրաստ ե լինում, նոր հարց ե առաջանում։— հացահատիկը բաշխել ծխերի վրա, թե՞ ծախել կոռպերատիվին և փողը բաժանել։ Այսպես ե գյուղացու մտքերի ընթացքը, յերբ գյուղ ե մտնում տրակտոր։ Իսկ այս ամենը ցույց ե տալիս, վոր համայնացման ճանապարհները արդեն գծվում են գյուղատնտեսական աշխատանքներում։

Այս ճանապարհի վրա յեն արդեն գտնվում գյուղական շատ տնտեսություններ։ 1925 թվի հունիսի 1-ին ԽՍՀՄ մեջ գյուղացիական կոռպերացված տնտեսությունների թիվը համառ եր 5.000.000-ի, այսինքն գյուղացիական բոլոր ծխերի 22,5 %։ Կոլեկտիվ խոշոր տնտեսությունների մեջ, վորտեղ աշխատանքն ու միջոցները համայնացրած են, բերքը 25—30 % ավելի յե լինում, քան առանձին-առանձին աշխատող տնտեսություններում։ Ընդհանուր առմամբ, կոլեկտիվ տնտեսություններում ամեն մի գեայատինից բերքը 10 տոկոսով ավելի յե ստացվում, քան մասնավոր տնտեսություններում։ Այս թվերը պարզ ասում են, վոր կոլեկտիվ տնտեսությունը ավելի յե ձեռնոտու գյուղացուն։ Մանավանդ չքավոր գյուղացիության համար խիստ ոգտակար ե անդամագրվել գյուղատնտեսական վարկային կոռպերացիային։

Իսկ ինչ վերաբերում ե միջակ գյուղացուն, պետք ե ասել, վոր նա, ունենալով կարգավորված տնտեսություն և դրանից ստանալով ոգուտ, ձգտում ե իր մթերքները ծախել արտելների միջոցով, դրա համար ել միջակ գյուղացին իր առաջ դնում ե հետեւյալ խնդիրը. գյուղատնտեսական կոռպերացիայի միջոցով կազմակերպել իր մթերք-

ների սպառումը (կաթ, ձու, գետնախնձոր, գինի և այլն), կոլեկտիվ մշակումը (կոռալերատիվ ջրաղաց, յուղի, պանրի գործարան և այլն): Իսկ կոռալերատիվից ստացած ոգուաց կարելի յե ոգտագործել՝ տրակտոր գնել, հիմնել ելեքտրակայարան, բաց անել գործարաններ, վոր նշանակում ե գյուղացուն տալ նորանոր ոգուտներ, թեթե վացնել նրա ծանր աշխատանքը: Այս ամենը վկայում ե, վոր կոռալերացիան անհրաժեշտ և ոգտակար ե գյուղացու կյանքում:

Այժմ տեսնենք, թե ի՞նչպես ե ընթանում գյուղացիության կոռալերացումը, տեսնենք, թե ո՞ւմն ե ընդգրկում գյուղատնտեսական կոռալերացիան:

Կոռալերատիվ անդամ են՝

Աշխատող անասուն չունեցող գյուղացիներ՝ 18,5%,  
1 աշխատող անասուն ունեցողներ՝ 22,5%, 2 աշխատող անասուն ունեցողներ՝ 33,1%, 3 աշխատող անասուն ունեցողներ՝ 49,0%, 4 աշխատող անասուն ունեցողներ՝ 19,7%:

Այս թվերը ցույց են տալիս, վոր կոռալերատիվի շարքերը գյուղի ունեուները ավելի շուտ են մտնում, քան չքավորները: Այդ նշանակում ե, վոր մենք պիտի շատ լուրջ ուշադրություն դարձնենք չքավոր գյուղացիության վրա, փրապեսզի նա դառնա կոռալերատիվի անդամ: Վերևում մենք ասացինք, վոր կոռալերացիայի անդամ են 5.000.000 գյուղական ընտանիք, վորից 1.141.900 չքավորներն են, վոր 24,5 տոկոսն են կազմում: Հարկավոր ե այդ ուղղությամբ աշխատանքները շարունակել: Շատ տեղերում չքավոր գյուղացիներին տալիս են հնարավորություն անդամավճարները մաս-մաս վճարելու: Զքավոր գյուղացիության տալիս են 8 ամսից մինչև 1 տարի ժամանակ՝ անդամավճարները մաս-մաս վճարելու:

Ինչի՞ յե ձգտում կոռալերացիան, Նախ աշակցել չքավոր և միջակ գյուղացուն՝ վարկի միջոցով ձեռք

բերելու անասուն, գործիքներ, սերմնացու և ուղիղ անհրաժեշտ պիտույքներ, վոր գյուղացին վորոշ ժամանակից հետո պիտի վերադարձնե: Այդ բանը պահանջում ե, վոր գյուղացին իր յուրաքանչյուր ազատ կոպեկը տանի կոռալերատիվ: Ինչքան շատ այդպիսի կոպեկներ հավաքվեն կոռալերատիվի կասայում, այնքան շուտ նա կկարողանա գյուղացու տնտեսությունը, առաջին հերթին չքավորի տնտեսությունը, կարգավորել, ամրացնել:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Միանալու ի՞նչ պարզ ձեռք կարող են լինել գյուղական տնտեսության մեջ, ինչո՞ւ մեծ մեքենաները, մանավանդ տրակտորը, նպաստում են գյուղի կոլեկտիվացիային:

Գյուղատնտեսական վարկային կոռալերացիան ի՞նչքան չքավոր գյուղացի անդամ ունի:

Ի՞նչպես ե ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՈԳՆՈՒՄ ՏՆԱՑՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ.

Գյուղում հողը պակաս ե. հողը՝ վատ մշակվելու հետևանքով՝ բավարար արդյունք չի տալիս: Մեր արդյունաբերությունն ել հնարավորություն չունի այժմ բոլոր կարիքավորներին աշխատանք տալ: Այդ ամենը միասին վերցրած ստիպում են գյուղացոց, մանավանդ չքավորներին, գյուղում աշխատանքի նոր աղբյուրներ գտնել՝ զանազան արհեստներով պարապելով: Այդպիսի տնայնագործների թիվը ԽՍՀՄ մեջ հասնում ե 5 միլիոնի: Նրանք համարյա բոլորը աշխատում են հինգավենական ձևերով՝ գործի վրա որական 14—16 ժամ քրտնելով:

Մանր արհեստներով են գրադարանները գյուղացիների համար համարավորություն չունեն գնել գործիքներ, մանավանդ մեծ քանակությամբ ապրանք և մեքենա: Հին ժամանակ արհեստավորները հարկավոր նյութերը ստանում ենին կուլակներից և նրանց հանձնում

իրենց աշխատանքի արդյունքը: Արհեստավորը միշտ կախում ուներ այդ կուլակներից: Վերջիվերջո այդպիսի միջնորդ-կուլակները դառնում եյին խոշոր առևտրականներ, փորոնք հարստանում եյին չքավոր արհեստավորների հաշվին:

Արհեստավորները (տնայնագործները) մեր յերկրում պատրաստում են բավական քանակությամբ զանազան տեսակի ապրանքներ՝ փայտից, մետաղից, կաշվից, բըրդից, մանվածքից, թղթից և այլն: Մեր յերկրի արդյունաբերության 20 տոկոսը կազմում է տնայնագործների արդյունաբերությունը: Ահա թե ինչու տնայնագործներին կազմակերպելը մեր առաջնակարգ խնդիրներից մեկն է: Այդ հարցը լուծելիս մեզ ոգնության ե գալիս՝ տնայնագործական-արդյունաբերական կոոպերացիան, վոր խմբում ե անկազմակերպ տնայնագործներին, ոգնումնը աշխատանքը թեթևացնելու խնդրում: Տնայնագործների կոոպերացիան արհեստավորին ձեռնտու պայմաններովնախ բաց ե թողնում անհրաժեշտ ապրանքներ, հետո աղատում ե արհեստավորին չարչու, կուլակի, խանութպանների շահագործումից: Բացի դրանից, կոոպերատիվը ավելի բարձր գնով ե վերցնում արհեստավորի պատրաստած ապրանքները շուկայում ծախելու համար: Այդպիսով, տնայնագործական - արդյունաբերական կոոպերացիայի եյական խնդիրներից մեկն ել այն ե, վոր նա շահագործողներից պաշտպանում ե չքավոր-տնայնագործ գյուղացուն: Միևնույն ժամանակ կոոպերացիան ձգտում ե, վոր առանձին-առանձին աշխատող արհեստավորները միանան, կազմեն արտելներ, ընկերություններ, գնեն իրենց աշխատանքի համար մեքենա: Դրանով թեթևանում ե արհեստավորի աշխատանքը, շատանում ե նրա պատրաստած ապրանքի քանակը, ոգուտը ավելանում: Այդպիսի կազմակերպությունները նպաստում են կազմականացնելու արհեստավորների և գործարանների միջև, վորպիսի հանգամանքը

արհեստավորների համար մեծ նշանակություն ունի: Զե՞ վոր տնայնագործը այժմ պետությունից ե ստանու մ թե մթերքներ և թե գործիք: Միևնույն ժամանակ պետական արդյունաբերությունը կարիք ունի արհեստավորների աշխատանքին: Այդ պատճառով ել կոոպերացիան աշխատում է կազմականացներին ազատելով շահագործումից:

Բացի այդ ամենից, կոոպերացիան պաշտպանում է արհեստավորին: Շատ դեպքերում նրան գյուղի կուլակների հետ շփոթում եյին և մեծ հարկեր վրան նշանակում: Բայց չի կարելի ասել, թե բոլոր աշխատավորները չքավորներ են: Զե՞ վոր կան արհեստավորներ, վորոնք 2 և ավելի աշակերտ կամ ոգնականներ ունեն: Զե՞ վոր նրանք այդ ոգնականներին շահագործում են: Բայց այդպիսիների թիվը շատ քիչ ե: Արհեստավորների մեծագույն մասը իրենք իրենց աշխատանքով են հաց ձարում: Այժմ թե կոմունիստական կուսակցությունը և թե Խորհրդային իշխանությունը պահանջում են, վոր լուրջ ուշադրություն դարձվի՝ այն տնայնագործի, արհեստավորի վրա, վորն իր աշխատանքով և ապրում: Բայց յերբեմն տեղի յեն ունենում սխալներ, շահագործում: Այդպիսի դեպքերում կոոպերացիան պաշտպանում է տնայնագործի իրավունքները, նա այդ անում ե իր իրավաբանական բաժինների միջոցով:

Թե ի՞նչ հաջողություններ ունի տնայնագործական-արդյունաբերական կոոպերացիան, այդ կարելի յետեսներ հետևյալ տախտակից:

|                                      |        |                               |
|--------------------------------------|--------|-------------------------------|
| 1924 թ. հունվ. 1-ին կազմուկերպված եր | 7.000  | արտել 300.000 տնայնագործներով |
| 1925      »                          | 11.000 | » 400.000      »              |
| 1926      »                          | 11.500 | » 450.000      »              |

Տնայնագործական-արհեստավորական կոոպերացիան շարունակում է մեծանալ: Կասկած չկա, վոր նա մոտիկ ապագայում կընդգրկե տնայնագործների մեծ մասը:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Գյուղում ազգաբնակչության վո՞ր մասն և սովորաբար պարագում արհեստով:

Առաջ ի՞նչպես եցին արհեստավորին շահադործում միջնորդ-գնողները:

Ի՞նչ գլխավոր նպատակներ ունի տնայնադործական արհեստավորական կոոպերացիան:

Ի՞նչոք ե կոօպերաժիսն գՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՊՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ.

Այժմ մենք գիտենք, վոր կոոպերացիայի միջոցով չքավոր և միջակ գյուղացիները ստանում են մեքենա, միանում, կազմակերպվում և դրանով ազատվում շահադործողներից: Ահա թե ինչ հետեանքների յենք հասել: Կաթնային կոոպերացիան Խ. Ս. Հ. Մ. մեջ ընդգրկում ե կաթնային ամբողջ տնտեսության 90 տոկոսը (յուղի և պանրի գործարաններ) և այդ արդյունաբերության նյութերի, կահավորման և այլ պիտույքների պահանջը բավարում է 80 տոկոսով, միջոցներ ե գործ զնում՝ արտադրանքի վորակը բարձրացնելու: Կաթնային կոոպերացիան կաթնային տնտեսության գլխավոր շրջաններում համարյա ամբողջովին հաղթել ե մասնավոր գործարանատերերին և միջնորդ-գնողներին:

Մեծ աշխատանք ե կատարել նաև կտավատի արդյունաբերության կոոպերացիան:

Բայց չե՞ վոր կոոպերացիան վոչ միայն հում նյութ ե մատակարարում արդյունաբերությանը, քաղաքին տալիս մնադի մթերքներ, այլ և գյուղ ե բերում գործարանային ապրանքներ, Այդ անում ե սպառողական կոոպե-

րացիան: Այդ կոոպերացիան նպատակ ունի մասնավոր առևտրականին գուրս քշելու, վոր սա միջնորդի դեր չկատարի արդյունաբերական ապրանքների և գյուղի սպառղների միջև:

Ի՞նչ ե արված: Այս հարցին կողատասխանեն թվերը: 1923—24 թ. կեսին մասնավոր առևտրականի առևտուրը կազմում եր մեր յերկրի առևտրի շրջանառության 50 տոկոսը: Նույն տարվա 2-րդ կեսին պատկերը փոխվում ե: մասնավոր առևտուրը մեր առևտրի շրջանառության մի յերրորդ մասն եր կազմում, 34 տոկոսը: 1924—25 թ.: 26 տոկոսը, 1925—26-ին՝ 25 տոկոսը: Այսպիսով, մասնավոր առևտրականը որո՞րի վրա սեղմվում ե, և յեթե նա մինչև հիմա գոյություն ունի, դրա պատճառը մեր անկազմակերպ լինելն ե: Թե սպառողական, թե գյուղատնտեսական և թե արդյունաբերական կոոպերատիվներում գլխավոր շարժիչ ուժը կազմում են անդամները, վորոնք անդամակիցներ են տալիս և ունեն իրենց մասը (փայերը): Յեթե կոոպերատիվի անդամները աշխատում են, հետեւում են, ջանք են թափում, վոր իրենց կոոպերատիվը լավ աշխատի, շատ ոգուտ տա, լավ պայքարե մասնավորների հետ, նրանք շատ շուտով կստանան իրենց աշխատանքի արդյունքը: Աչալուրջ անդամներ ունեցող սպառողական կոոպերատիվից վոչ ապրանք կգողանան, վոչ ել նրա հաշիվների մեջ սխալ կգտնեն:

Մեր արդյունաբերությունը մինչև հիմա չի կարող բավարարել անհրաժեշտ պահանջը: Գործարանային ապրանքների քանակը դեռ քիչ ե: Դրա հետեանքով բարձրանում են ապրանքների գները: Այնտեղ, ուր կոոպերատիվ չկա, մասնավոր առևտրականը ոգտվում ե և գները բարձրացնում: Որինակի համար՝ 1926 թվի ապրիլի 2-ին չթի և շաքարի գները կոոպերատիվներում և մասնավոր խանութներում հետևյալն ելին.

| Հյուս.           | Ուկրա-    | Կենտր.       | Արևմտյան  |
|------------------|-----------|--------------|-----------|
| Կովկասում        | լինայում  | նահանգներում | Սէբէռում  |
| Շաքարավաղի գըր-  |           |              |           |
| քանքան կոռպե-    |           |              |           |
| րատիվում . . . . | 28,0 կոպ. | 25,8 կոպ.    | 28,0 կոպ. |
| 31,0 կ.          |           |              |           |
| Մասնավոր խանու-  |           |              |           |
| թում . . . .     | 29,0 »    | 26,8 »       | 30,0 »    |
| 32,0 »           |           |              |           |
| Զթի մետրը (մաս   |           |              |           |
| 1 1/2 արշին) կո- |           |              |           |
| ոպերավիզում . .  | 45,0 »    | 57,7 »       | 49,0 »    |
| 45,0 »           |           |              |           |
| Մասնավոր խանու-  |           |              |           |
| թում . . . .     | 58,0 »    | 66,8 »       | 58,0 »    |
| 55,0 »           |           |              |           |

Բացի դրանից, հաճախ ե պատահում, վոր մասնավոր առևտրականը չիթը ծախում ե վոչ թե մետրով, այլ արշինով, ուրեմն և ավելի յե շահվում:

Այսպես ուրեմն, սպառողական կոռպերացիան կազմակերպելով գյուղական ազգաբնակչությունը՝ քաղաքից իր ժամանակին և մատչելի գներով ապրանք ե ստանում և պայքարում մասնավոր առևտրականի դեմ:

Ինչպես վարկային գյուղատնտեսական կոռպերացիային, նույնպես և սպառողական կոռպերացիային անդամագրվելու համար, չքավոր գյուղացիությանը մի շարք արտոնություններ են տրվում:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչպես ե կոռպերացիան ոգնում գյուղացիներին՝ իրենց մթերքները ծախելու ուղղակի նրան, ում հարկավոր ե:

Ի՞նչպես ե կոռպերացիան գործարանային ապրանքները գյուղ հացնում:

Ի՞նչ գլխավոր անելիքներ ունի սպառողական կոռպերացիան:

ԻՆՉՈՒ ԿՈՐՊԵՐԱՑԻԱՆ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ Ե.

Մեր յերկիրը չքավորությունից ազատելու, անտեռությունը լավացնելու համար պետք ե, վոր մենք միլիո-

նավոր մանր տնտեսությունները միացնենք, նրանց տանք մեքենաներ, կապենք ծանր արդյունաբերության հետ: Այդ ամենի համար անհրաժեշտ են միջոցներ, մեծ գումարներ: Իսկ մեր պետությունը այժմ այդպիսի հսկայական միջոցներ չունի: Այս գեպքում ոգնության ե գալիս կոռպերացիան, վոր կոպեկներ հավաքելով՝ միևնույն նպատակի համար միացնում ե միլիոնավոր աշխատավորությանը: Կոռպերացիան սովորեցնում ե նոր կյանք հիմնել մասսաների ձեռքով: Միայն այդ գեպքում ե, վոր նոր շինարարական աշխատանքը կարող ե դառնալ մասսաների համար հարազատ: Կոռպերացիան սովորեցնում ե աշխատավորությանը բոլորովին այլ կերպ նայել կոլլեկտիվ աշխատանքի վրա: Կոռպերացիան հիմքից քանդում ե անհատական անտեսության մնացորդները: Այդ առթիվ ընկ. լենին իր հոդվածներից մեկում հետևյալն ե գրել. «Միայն այն գեպքում, յեթե կարողանանք գյուղացիներին գործով ցույց տալ հանրային, կոլլեկտիվ աշխատանքի, հողի ընկերովի մշակման առավելությունները, յեթե կարողանանք գյուղացիներին ոգնել արտելային տնտեսությունների միջոցով,—միայն այն ժամանակ բանվոր դասակարգը, վոր պետական իշխանության գլուխ ե անցած, իրոք կապացուցե իր ուղիղ վերաբերմունքը գեպի գյուղացիությունը, հաստատապես իր կողմը կքաշե բազմամիլիոն գյուղացիական մասսան: Իսկ կոռպերացման գեպքում—մենք յերկու վոտներով արդեն կանգնած կլինենք սոցիալիստական հողի վրա»: Ահա ինչու յե ասվում, թե կոռպերացիան սոցիալիզմի հիմնական ճանապարհն ե: Այդ այն գլխավոր ուղին ե, վորով գնալիս, կարելի յե շատ կարճ ժամանակա ընթացքում, ցրված գյուղական միլիոնավոր մասսան խմբել մեքենայի շուրջը, գյուղատնտեսության վիճակը չեղած բարձրության հասցնել և դա սերտ կապել արդյունաբերության հետ:

ՀԱՐՑԵՐԻ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. Ի՞նչպես ե կոռպերացիան գյուղացիներին ոգնում՝ մեքենաներ գնելու համար միջոցներ գտնել:

Ընկ. Լենինի կարծիքով ինչո՞ւմն և կայանում կոռպերացիայի գլխավոր անելիքը գյուղում:

#### ԿՈՂՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՎԱՃՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Սպառողական լոռովերացիան. Սպառողական կոռպերացիան գրավել ե յերկրի շուկայի մանրածախս առևտրի 50 տոկոսը. իսկ յեթե վերցնելու լինենք միմիայն գյուղական վայրերի առևտուրը, ապա կտեսնենք, վոր կոռպերացիան այստեղ իշխում ե 80 և ելավելի տոկոսվէ. Կոռպերացիայի սկզբնական ցանցն անցյալ 1925—26 թվերին ունեցել ե 14 միլիոն ոռուբլու առևտուր և ծրագրել ե ընթացիկ տարվա համար 18 միլիոն ոռուբլու շրջանառություն:

Հայկոռպը նույնպես մեծ նվաճումներ ե կատարել: Նրա շրջանառությունն աճել ե,—3 և կես միլիոնից հասել ե 7 միլիոնի. այժմ նա ծրագրում ե 8 միլիոնի առևտուր անել:

Հայաստանի գյուղերում և քաղաքներում կոռպերացիան ունի մոտ 300 առևտրական կետ:

Կոռպերացված են ավելի քան 65 հազար մարդ, դրանցից մոտ 15 հազարը՝ բանվորներ ու ծառայողներ են, մոտ 20 հազարը՝ չքավոր գյուղացիներ, իսկ մնացածի ճնշող մեծամասնությունը միջակ գյուղացիներ են:

Չքավոր գյուղացիներին տրված ե յեղել մեծ արտոնություններ. նրանց յերկար ժամանակ ե տրվում փայտվարը մուծելու. նրանց անդամագրում են՝ նրանցից ընդունելով մուտքի վճարը և փայտվարի մի մասը:

Նույն վերաբերմունքը դեպի չքավոր գյուղացիությունը շարունակվում ե նաև հիմա, և շարունակվելու յետինչդեռ մնացած գյուղացիներից, այժմ

անդամագրվելու ժամանակ, պահանջվում ե լրիվ փայտվանունետե, մոտ 10 հազար չքավոր գյուղացիների անդամագրել են կոռպերացիայն՝ ի հաշիվ այն փոնդի, վոր կազմված ե կոռպերացիայի զուտ վաստակի ու փոխոգկոմների գումարների մասնանումներից:

Ապրանքների գները փորոշ չափով իջեցրված են, բայց պետք ե ասել, վոր կոռպերացիան այս ասպարիզում քի'չ նվաճումներ ունի: Ճիշտ ե, անցյալ տարվա համեմատությամբ այս տարի ծախսելը փոքր են, ծախսերի կրճատում տեղի յե ունեցել, բայց այստեղ ել չի արված այն, ինչ կարելի յեր սպասել: Կոռպերացիայի ստորին ցանցն այս խնդիրը դեռ չե լուծել, այս հարցին լուրջ չե վերաբերվել:

Մենք թվեցինք մեր կոռպերացիայի մի շարք նվաճումները, բայց նա ունի և շատ թերություններ, վորոնց դեմ մենք կովում ենք, բայց դեռ չենք կարողացել լիովին վերացնել:

Բացի ծախսերի կրճատման ու գների իջեցման խընդուցից, կոռպերացիայի առաջ կանգնած ե վաճառվող ապրանքների վորակի բարձրացման հարցը: Մեր բանվորի և գյուղացու պահանջները դեռ լավ չեն ուսումնասիրված: Շատ անգամ կոռպերատիվներում չեն գտնվում գյուղացուն անհրաժեշտ մի շարք ապրանքներ, թեկուզ հենց մանրեղեն: Խոսքը, իհարկե, մանուֆակտուրայի մասին չե: մանուֆակտուրա քի'չ կա, դժվար ե ճարվում: Բայց չե վոր բացի մանուֆակտուրայից ուրիշ ապրանքներ ել կան, վոր գյուղացուն հարկավոր են: Կոռպերացիան կարողացել ե հիմնական ապրանքների շուկան գրավել: Մանուֆակտուրան, աղը, շաքարը, նավթը, ալյուրը—նրա միջոցով են հասնում գյուղ: Բայց մնացած ապրանքները դեռ մինչև այժմս ել մասնավոր առևտրականների ձեռքերում են, նրանց վրա կոռպերացիան քի'չ ուշադրություն ե դար-

Դրել: Կաշվեղենի, գալանտերեյի, մանրեղենի և անտեսա: կան մի շարք ապրանքների (կացին, մանդաղ) վրա մեծ ուշադրություն պիտի դարձնել: Այս ապրանքների սով չկա քաղաքներում, այս ապրանքները հեշտ են գտնվում, և դրանց լավ տեսակները, լավ փորակինը պիտի գնել և գյուղ տանել: Լավ փորակի ապրանք գնելու վրա մեր գյուղի կոռպերատիվները ուշք չեն դարձնում: Գներն ել կարելի յե իջեցնել, կոռպերատիվի ծախսերն ել կարելի յե կըճատել, ապրանքների վորակն ել լավացնել և ցանկացած ապրանքները գյուղում ունենալ:

Այս բոլորը կարելի յե իրականացնել, յեթե գյուղացիությունը ակտիվ լինի, կոռպերատիվին մոտ կանգնի, խանութային հանձնաժողովների աշխատանքներին զարկ տա, վատ փորակի ապրանքը չգնի ու փարչությունից պահանջի, փորնա ի կատար ածի լենինի՝ կոռպերացիային տված պատգամը—«գյուղացուն լավ և եժան ապրանք հասցըր՛ւ»: Այս ժամանակ մեր նվաճումները ավելի կմեծանան:

Գյուղատեսական կոռպերացիան. Գյուղատնտեսական կոռպերացիան այս վերջին յերեք տարվա ընթացքում խոշոր չափով առաջադիմում ե և Հայաստանի գավառների գիտակից գյուղացիներն այժմ խմբված են զանազան գյուղկոռպերատիվների շուրջը—մինչև 31.000 տնտեսություններ, փոր կազմում ե Հայաստանի ամբողջ տնտեսությունների 20 տոկոսը կամ մեկ հինգերորդ մասը:

Գյուղատնտեսական կոռպերացիան մեղ մոտ ունի 220 միավոր, Այդ 220 կոռպերատիվներն այս 1926 թվի ընթացքում պատրաստել են և վաճառահանել 3.113.000 ռուբլու մթերքներ և հում նյութեր Յերևանի, Թիֆլիսի, Բագվի և Մոսկվայի շուկաներում: Այդ կոռպերատիվներն այս 1926 թվի ընթացքում բաժանել են մեր գյուղացիության, վարկի կարգով, 953 հազար ռուբլու գործիքներ, մեքենաներ և նյութեր:

Ներկայումս մեր գյուղկոռպերատիվներն աշխատեցնում են 108 տրակտոր, վորոնք վարում են գլխավորապես լծկանազուրկ չքավոր ու միջակ գյուղացիների հողերը: Ծրագրված ե առաջիկա գարնանը բերել ևս 30 տրակտոր՝ բաշխելու կոռպերատիվներին, չքավորների հողերը վարելու համար: Անհրաժեշտ ե, վոր մեր գյուղկոռպերատիվները առաջիկայում իրենց աշխատանքներն ավելի ևս կանոնավորելու համար ձեռք առնեն հեակյալ միջոցները—

1) Իրենց սեփական միջոցները ուժեղացնելու համար՝ գանձեն փայտաճարները, առանց վորի հնարավոր չետագա աշխատանքների առաջադիմությունը:

2) Գյուղատնտեսական նպատակային վարկերը բաց թողնեն գլխավորապես լծկան, կով, գութան չունեցող չքավոր գյուղացիներին կամ չքավոր գյուղացիներից կազմված կոլեկտիվներին՝ միասին ոգտագործելու նպատակով:

3) Աշխատել, վոր անդամների կողմից շուկա հանվող մթերքները վաճառվեն կոռպերատիվների միջոցով, չգցելով մասնավոր առևտրականների ձեռքը:

4) Նոր անդամներ ընդունելիս՝ լինել չափազանց զգույշ, վորպեսզի կոռպերատիվների մեջ չանդամագրվեն խարդախ և անպարտաճանաչ անձնավորություններ և ոգտագործեն գյուղատնտեսական վարկը ու հետազում չվերադարձնեն:

5) Կյանքի կոչել վերստուգիչ հանձնաժողովներին և ստիպել, վոր հետաքրքրվեն կոռպերատիվների գործերով, ստուգեն հաշիվները և այլն:

6) Կազմակերպել ժողովներ, դասախոսել և զրուցել գյուղկոռպերացիայի գաղափարների տարածման, նրա նշանակության մասին, ձեռք բերել անդամների համար մատելի գրականություն:

Գյուղատնտեսական կոռպերացիայի առաջին գործը

աղիտի լինի՝ ոգնել չքավոր գյուղացուն և կոռպերացման  
միջոցով նրա տնտեսությունը բարձրացնել:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԴԱՑԱԾԼ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Մտածեցե՛ք, թե ինչպիսի արտել կամ ընկերություն ե  
կարեոր ձեր շրջանում կազմակերպել (հողի մշակման,  
կաթնատնտեսության և այլն): Խնդրեցե՛ք գյուղատնտեսին,  
վոր այդ հարցի մասին ձեզ մի զեկուցում անդ:

Չեռք բերեք այն արտելների, ընկերությունների կա-  
նոնադրությունը, վոր ձեզ հետաքրքրում ե, և ուսումնասի-  
րեցեք: Առանձին ուշադրություն դարձրեք, թե ի՞նչ արտո-  
նություններ պետք ե տրվեն չքավոր գյուղացիներին:

Քննեցե՛ք, թե քաղաքացիական կովի տարիներին, ապ-  
րանքների փոխանակության խանգարումը քաղաքի և գյուղի  
միջև ի՞նչպես ազդեց տնտեսական զարգացման վրա:

Խնդրեցե՛ք սպառողական կոռպերացիայի աշխատանք-  
ներին մասնակցող ձեր ներկայացուցչին, վոր նա իր աշխա-  
տանքի մասին ձեզ զեկուց: Թող նա ձեզ պատմե, թե վերջին  
ամիսներին ի՞նչպես և աշխատել կոռպերացիան, վո՞րքան  
ոգուտ և ստացել և ինչի վրա յե ծախսվել այդ ոգուտը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

|  |    |
|--|----|
| Մեր արդյունաբերությունը . . . . .                              | 3  |
| Մեր արդյունաբերության հետազ զարգացման ուժիները . . . . .       | 20 |
| Գյուղական տնտեսության զարգացումը . . . . .                     | 37 |
| Կուլակի, միջակի և չքավորի մասին . . . . .                      | 53 |
| Կոռպերացիան ԽՍՀՄ մեջ և նրա նշանակությունը գյուղացիության համար | 70 |

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ԲՈԼՈՐ 3 ՊՐԱԿՆԵՐԸ

Առաջին պրակի բովանդակությունը

Առաջարան. Ի՞նչպես պետք ե այս գրքից ովտվել (մեթոդ, ցուցմունքներ).

I. Մեր յերկիրը.

II. Ո՞վ և ինչպես ե մեր յերկիրը կառավարում.

III. Խորհուրդների աշխատանքը գյուղում.

IV. Ազգային հարցը և ինչպես ե նա լուծվել ԽՍՀՄ մեջ.

Երրորդ պրակի բովանդակությունը

I. Կուսակցության և գյուղական կոմունիտի մասին.

II. Կոմյերի ամիսության անելիքները.

III. Կարմիր բանակը.

IV. ԽՍՀՄ և ուրիշ յերկիրները.

ՀՀ Ազգային գրադարան



NL0187414



ԳԻԱԸ 50 ԿՈՄ.



---

**ПОЛИТИЧЕСКИЕ БЕСЕДЫ  
с КОМСОМОЛЬЦЕМ**

**по В. ВИРГАНСКОМУ**

---

На армянском яз.

Выпуск II.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.  
Москва, Никольская, 10.